

## ԵԱՅԿ-Ի ՆԱԽԱԳԱՅԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ՝ ՅՍՏԱԿ ՔԱՅԼԵՐ, ԱՅԼԱՊԵՍ ՅԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԸԼԼԱԼ ԱՂԵՏԱԼԻ

ԵՆԽՎ-ի նախագահ Լուիս Մարիա Դե Պուլզ՝ ամփոփելով անցեալ շաբաթ Հայաստան կատարած իր երկօրեայ այցի արդիւնքները, յայտարարած է որ, Հայաստանի իշխանութիւնները, որոնց շարքին երկրի նախագահը, յայտնած են Եւրախորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) թիւ 1609 եւ 1620 բանաձեւերու պահանջները ամբողջութեամբ կատարելու քաղաքական կամք, սակայն այդ խոստումներուն պէտք է յաջորդեն յստակ միջոցառումներ:



ԵՆԽՎ-ի նախագահ Լուիս Մարիա Դե Պուլզ

Եւրախորհուրդի պաշտօնական կայքէջին վրայ տեղադրուած հաղորդագրութեան համաձայն, Լուիս Մարիա Տէ Պուլզ յատկապէս կարեւոր նկատած է Մարտ 1-2-ի իրադարձութիւններու անկախ հետաքննութիւնը եւ այդ առթիւ կալանաւորուած անհատներու ազատ արձակումը:

«Պէտք է յստակ ըլլայ, որ այդ իրադարձութիւններու կապակցութեամբ մարդկանց ազատագրուածը՝ բացառութեամբ անոնց, որոնք բռնութեամբ զուգորդուած լուրջ յանցագործութիւններ կատարած են, անընդունելի է վեհաժողովի համար», - յայտարարած է ԵՆԽՎ-ի նախագահը: - «Հետեւա-

բար, ես իշխանութիւններուն կը յորդորեմ գործադրել իրենց հասանելի բոլոր միջոցները՝ այդ անձիք կարելիին չափ շուտ ազատ արձակելու համար: Միայն այդ ճանապարհով կրնան ապահովուիլ հաշտութեան եւ երկխօսութեան

Շարք էջ 4

## Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՄ՝ ՆՍՏԱՑՈՅՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՅԱՅԿԱԿԱՆ ՅԻՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ ԱՌՋԵԻ

Ընդառաջելով Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան Ամերիկայի կենտրոնի կոչին, Երեքշաբթի Յուլիսի 29-ին, խումբ մը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ եւ ԱՄՆ-ի քաղաքացիութիւն ունեցող հայեր, մասնակցեցան բողոքի ցուցին, որ տեղի ունեցաւ Լոս Անճելըսի ՀՀ հիւպատոսարանի շէնքին առջեւ:



Բողոքի ցուց Լոս Անճելըսի Հայաստանի հիւպատոսարանի շէնքին առջեւ

Յոցի մասնակիցներու կողմէ նամակ յղուեցաւ Հայաստանի իշխանութիւններուն, Եւրախորհուրդի Խորհրդարանական վեհաժողովին, ինչպէս նաեւ ԱՄՆ-ի Պետական գրասենեակին՝ պահանջով մինչեւ Օգոստոսի 1-ը անյապաղ ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկեալները:

Մասնակց Գլխաւոր Հիւպատոսին յանձնելու փորձ կատարուեցաւ քաղաքապետարանէն հարազատներուն կողմէ, սակայն Գլխաւոր Հիւպատոսը մերժեց ընդունիլ գանտը:

Նամակը Գլխաւոր Հիւպատոսին յանձնելու փորձ կատարուեցաւ քաղաքապետարանէն հարազատներուն կողմէ, սակայն Գլխաւոր Հիւպատոսը մերժեց ընդունիլ գանտը: Հիւպատոսի այս արարքը արժանացաւ բողոքի ցուցի մասնակիցներու ցատումին: Այնուհետեւ բողոքին մասնակցողներու նախաձեռնութեամբ ցուցը վերածուեցաւ նստացոյցի: Նստացոյցի մասնակիցները, մօտ հարիւր հոգի, փոխնիփոխ, մինչեւ երեկոյեան ժամը 9-ը մնացին Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի շէնքի դիմաց: Նստացոյցը շարունակուեցաւ նաեւ յաջորդ օրը, որու ընթացքին խումբ մը հայեր յայտարարեցին հացադուլ՝ 24 ժամ տեւողութեամբ:

Հիւպատոսի այս արարքը արժանացաւ բողոքի ցուցի մասնակիցներու ցատումին:

## ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՑԱԻ ՅԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, Լեւոն Տէր-Պետրոսեանի նախաձեռնած Հայ Ազգային Գոնկրէսին միանալու կապակցութեամբ:

«Հայ հասարակութիւնն օր օրի աւելի է համոզուած, որ նախընտրական, ընտրական յետընտրական ժամանակաշրջանում գործող ռեժիմը հետապնդել եւ իրականացրել է իշխանութեան բռնազաւթում, եւ այն ժողովրդին վերադարձնելու միակ ճանապարհը համակարգուած, հետեւողական պայքարն է», ըսուած է Կուսակցութեան յայտարարութեան մէջ:

«Մենք ունենք 80 քաղբանտարկեալներ, հազարաւոր բերման ենթարկուած եւ հարցաքննուած

քաղաքացիներ, բռնութիւնների եւ խոչտանգումների ենթարկուած ընդդիմադիր ակտիւիստներ: Այս համատարած քառսի եւ ամենաթողութեան մթնոլորտում Համաժողովրդական Շարժումն ու աջակցող կուսակցութիւնները հնարաւորինս անում են երկրում ժողովրդավարութիւն եւ սահմանադրական կարգ հաստատելու համար: Այսօր, Օգոստոսի 1-ի հուժկու եւ վճռական հանրահաւաքից առաջ, մենք հրամայական ունենք Շարժումը դարձնել էլ աւելի կազմակերպուած եւ համախմբուած: Ահա այս նպատակով է, որ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի կոչով եւ առաջարկութեամբ ստեղծ-

Շարք էջ 4

## ՔՐԻՍԹՈՖԸՐ ՈՒՌՔԸՐԻ ՅԱՄԱԶԱՅՆ՝ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒԼԸ ԿԸ ՄՆԱՅ ՈՉ ԱԶԱՏ

Նախկին խորհրդային շարք մը երկիրներուն մէջ մամուլի ազատութեան վերաբերեալ Freedom House-ի (Ազատութեան Տուն) ուսումնասիրութիւնները բաւական մռայլ պատկեր կը ներկայացնեն, եւ արդիւնքները խիստ մտահոգիչ են: Այս մասին «Ազատութիւն» ռատիոկայանի հետ իր ունեցած հարցազրոյցի ընթացքին ըսած է կազմակերպութեան հետազոտութիւններու բաժնի տնօրէն Քրիսթոֆըր Ուրքըրը՝ ուշադրութիւն հրաւիրելով այն իրողութեան, որ ԱՊՀ-ի երկիրներէն 10-ի պարագային մամուլը գնահատու-

ած է «ոչ ազատ», եւ միայն վրաստանի եւ Ռուսիոյ մէջ՝ «մասամբ ազատ»:

«Իսկ ի՞նչ միջոցներ կը կիրառուին նախկին խորհրդային երկիրներուն մէջ ազատ մամուլը ձեռնարկուած համար», - «Ազատութիւն» ռատիոկայանի այս հարցին ի պատասխան, հեղինակաւոր կազմակերպութեան փորձագէտը ըսած է. - «Գոյութիւն ունին մամուլին ահաբեկելու շարք մը ձեւեր, որոնց վրայ կը հիմնուին բոլոր բռնապետական վարչախումբերը: Այդ

Շարք էջ 4

## ԾԵՐԱԿՈՅՏԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՅԱՍՏԱՏԵՑ ՄԱՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԸ՝ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆ

Միացեալ Նահանգներու Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովը Յուլիս 29-ին հաստատեց Մարի Եովանովիչի թեկնածութիւնը՝ որպէս Հայաստանի մօտ Ամերիկայի արտակարգ եւ լիազօր դեսպան:



Մարի Եովանովիչ

Մարի Եովանովիչի թեկնածութեան վերջնական հաստատման համար անհրաժեշտ է Մերակոյտի լիազուժար նիստի հաւանութիւնը, որ հաւանաբար կայանայ առանց դժուարութեան:

2006-ին դեսպան ճոն էվընս ետ կանչելուէն ի վեր Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանի պաշտօնը կը մնայ թափուր:

Նիւ ձըրքի նահանգի դեմոկրատ ծերակուտական ճոն Մենեն-

տէզ երկու անգամ արգելափակած էր նախագահ ճորճ Պուշի կողմէ առաջարկուած նախկին թեկնածուի՝ Ռիչըրտ Հոկլըտի հաստատումը, երբ ան մերժած էր ընդունիլ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը:

«ՄԱՍԻՍ» ԾԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԳ  
 Տարեկան արձակուրդի առիթով «Մասիս» Շաբաթաթերթը լոյս պիտի չտեսնէ յաջորդ երկու շաբաթներուն, (Օգոստոս 9-ին եւ 16-ին):

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՐԿԱԿԻ ՄՕՏԵՅՈՒՄ՝ ՍՓԻՌԵԱՎՈՅՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Վերջերս Երեւանում էր Ստոկ-հոլմի The Royal Institute of Technology-ի պրոֆեսոր Արամայիս Միրզախանեանը, որը մշտապէս համագործակցել է հայաստանեան գիտական շրջանակների, Սփիւռքի հայկական կազմակերպութիւնների հետ, եղել է հայ-չուեղական մշակութային կենտրոնի նախագահ: Նա բազմիցս բարեգործական առաքելութեամբ հանդէս է եկել Հայաստանում եւ Արցախում, պարգևատրուել ԼՂՀ «Երախտագիտութիւն» եւ այլ շքանշաններով: Ա. Միրզախանեանը տեղեկացրեց, որ ներկայ է եղել Լ. Տէր-Պետրոսեանի մասնակցութեամբ առաջին հանրահասարակ, այնուհետեւ հայաստանեան իրադարձութիւններին հետեւել է թերթերի եւ ինտերնետի միջոցով: «Ես Հայաստանը դիտում եմ որպէս մեր նախնիների հայրենիք, ուստի ինձ իրաւունք եմ վերապահում ինչ-որ չափով խառնուել Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային կեանքին: Ճիշդ է, լինելով սփիւռքահայ, ես ընտրուելու եւ ընտրելու իրաւունք չունեմ, բայց դա չի նշանակում, թէ նաեւ ձայնագուրկ եմ: Կարծում եմ՝ խօսելու իրաւունք չա՛հել եմ հայրենիքում կատարած իմ գործերով: Ինձ դուր չի գալիս այն վիճակը, որ այսօր կայ Հայաստանում: Եթէ 100,000-աւոր մարդիկ դուրս են գալիս փողոց՝ ուրեմն նրանք խնդիր ունեն, եւ իշխանութիւնները չպէտք է այս ամէնի

առաջ աչք փակեն: Բացի այս, իւրաքանչիւր մարդ ունի ազատօրէն մտքերն արտայայտելու իրաւունք եւ պարտադիր չէ, որ դրանք բացարձակ ճշմարիտ լինեն... Ես եւրոպական երկրներում մասնակցել եմ միտինգների ու ցույցերի, ու դրա համար ինձ ոչ ոք պատասխանատուութեան չի կանչել, մինչդեռ Հայաստանում... Այսօրուայ վիճակը, որ ստեղծուեց յատկապէս Մարտի 1-ից յետոյ, ցաւօք, միջազգային հնչողութիւն է ստացել: Հայաստանի իշխանութիւնները պիտի թոյլ չտային՝ բանը հասնէր դրան: Կատարուել է ոճրագործութիւն, մարդիկ են գոհուել, պատասխանատու են էլ միանշանակ իշխանութիւններն են, ինչպէս ընտանիքի մեծն է պատասխանատու՝ իր ընտանիքում կատարուած ամէն իրադարձութեան համար, կարծում է պարոն Միրզախանեանն ու լաւելում, գիտակից, մտաւորական սփիւռքահայի համար անհասկանալի է, որ հայ գիտնորը, ոստիկանը կարող է կանգնել հայի դէմ»: Դառնալով Սփիւռքի պետական կոմիտէին ու նրա ղեկավար Հրանտշ Յակոբեանին, որին, իր խօսքերով, ճանաչում է կոմսոմոլ ժամանակներից, մեր գրուցակիցը փաստում է. «Առայսօր Հայաստանում չունեն Սփիւռքի ճշգրիտ բացատրութիւնը: Կարլէն Դալլաքեանի ժամանակ ակադեմիային կից կար Սփիւռքի ուսումնասիրութեան բաժին, մինչեւ հիմա չհասկացանք՝ ուսումնասիրեցի՞ր,

եթէ այժմ ի՞նչ եղան այդ ուսումնասիրութիւնները: Հայաստանեան իշխանութիւնների ընկալմամբ, Սփիւռքը այն մեծահարուստներն են, որոնք իրենց եկամտահարկերից կարողանում են ինչ-որ բան տալ Հայաստանին... Ոչ, Սփիւռքը դա չէ, ու կրկնում եմ՝ մինչեւ հիմա պարզ չէ, թէ ինչ է Սփիւռքը: Օրերս էլ Սերժ Սարգսեանը «բազէների» հաւաքի ժամանակ կոչով դիմեց Սփիւռքին, թէ՛ եկէք շենացրէք ձեր հայրենիքը: Եղբայր, ո՞ւմ ես դիմում, ո՞ւմ եմ նկատի ունենալ... Սփիւռքի հետ այսպէս աշխատելն անիմաստ է... Ինչ վերաբերում է «բազէներին», դրանք վատ տպաւորութիւն են թողնում սփիւռքահայերիս վրայ՝ իրենց հագուստներով... մնում է միայն ֆաշիստական լոգոնշններ կրեն...»: Ա. Միրզախանեանն անդրադարձաւ նաեւ քաղաքատարկեցումներին ու սփիւռքահայերի հանդէպ իշխանութիւնների կիրառած երկակի չափանիշներին. «Ղարաբաղեան շարժման ժամանակ 6-7 միլիոն սփիւռքահայերից քչերը եկան ու Արցախում անուղղակի եւ ուղղակի ներդրումներ կատարեցին: Նրանց թուում էին ժիրայր Սէֆիրեանը, Սարգիս Հացպանեանը: Առաջինին բանտում ամիսներ շարունակ պահելուց յետոյ, հիմա սպառնում են վտարել հայրենիքից, երկրորդը ընդհատակում է, քանի որ հետապնդում է սեփական կարծիքն արտայայտելու համար: Նոյնը վերաբերում է մտաւորական

Ալեքսանդր Վարպետեանին, որին քանի տարի է՝ մոտաքի վիզա չեն տալիս: ՀՀ իշխանութիւնները երկակի մօտեցում են ցուցաբերում... ՀՅԴ բիւրոյի անդամների մեծ մասը եւս օտարերկրեայ քաղաքացի է: Նրանք վերջերս բացէիբաց յայտարարեցին, որ գնում ենք Մադկաձոր՝ գաղտնի ժողովի: Բիւրոյի կազմում էլ ՀՀ կառավարութեան 3 անդամներն էին: Յետոյ այդ օտարերկրացիները վերադարձան Երեւան, 3 նախարարներին հանեցին, այլ նախարարների նշանակեցին: Ստացում է, որ շատ հանգիստ օտար երկրի քաղաքացին կարող է գաղտնի ժողով անել, նախարար փոխել, ու ոչ Անվտանգութեան խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարեանը, ոչ էլ ՀՀ գլխաւոր դատախազ Ադուան Յովսէփեանը չեն ասի՝ էս ի՞նչ էք անում»:

Ա. Միրզախանեանը դատապարտեց նաեւ այն սփիւռքահայ մտաւորականներին, որոնք Հրանտշ Յակոբեանի հետ վերջերս քննարկումներ են անցկացրել Մադկաձորում ու Արցախում, եւ չեն դատապարտել ՀՀ-ում մարդու իրաւունքներին ոտնահարման դէպքերը. «Այդ սփիւռքահայ մտաւորականները մե՛զ չեն ներկայացնում»:

Միրզախանեանին մտահոգում է նաեւ, որ Հայոց ցեղասպանութեան հարցն այսօր դարձել է «մանր դրամ», եւ այն ամէն ոք իր ուզած ձեւով է մեկնաբանում. «Եթէ հայաստանեան իշխանութիւնները առաջարկում են, որ պատմաբանները համատեղ ուսումնասիրեն խնդիրը, դա նշանակում է, որ հայերս էլ ենք կասկածում, թէ ցեղասպանութիւն է կատարուել: Իսկ դա բարոյական չէ»:

ԳՈՉԱՐ ՅԱԿՈԲԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԲԻՉՆԵՍԸ

ՀՀ մաքսային կոմիտէում մոռեգնում է կոռուպցիայի դէմ պայքարը, Սերժ Սարգսեանը այդ կոմիտէի ղեկավար է նշանակել ազնուագոյն մի մարդու՝ Գագիկ Խաչատրեանին, որի միջոցով կոռուպցիան այդ համակարգում պէտք է արմատախիլ արուի:

Հենց այսպիսի պատկեր է ներկայացնում մեր շարքային քաղաքացուն, որին փորձում են համոզել, թէ Սերժ Սարգսեանը հիմա, ինչ-որ մի պահից սկսել է լաւ գործեր անել:

Հիմա նայենք, թէ իրականում ինչ է կատարուել եւ կատարում Մաքսայինում: Այսօր անդրադառնանք Սերժ Սարգսեանի նախասիրութիւններին՝ մէկին՝ սեւ մետաղների ջարդոնի արտահանմանը: Չափազանց մոթ մի ոլորտ, որի ուսումնասիրութիւնից պարզ կը դառնայ, թէ որքանով են Մաքսայինում բարեփոխումներ իրականացնում, որքանով է արմատախիլ արուում կոռուպցիան: Նախ սկսենք նրանից, որ սեւ մետաղի ջարդոնի արտահանումը որպէս բիզնես ազատ է, այն լիցենզաւորման ենթակայ գործունէութիւն չէ: Այսինքն՝ իւրաքանչիւր մարդ կարող է օրինական ձեւով որեւէ գործարանից կամ անհատ քաղաքացիներից գնել մետաղի ջարդոնը, բարձել գնացքը կամ բեռնատարը, արտահանել իր ուզած երկիր ու վաճառել: Բայց սա միայն տեսականօրէն: Խիստ տեսականօրէն: Գործնականում ոչ ոք չի կարող Հայաստանից նոյնիսկ մէկ բեռնատար սեւ մետաղի ջարդոն արտահանել առանց յատուկ «դաբրոյի»: Եւ այդ «դաբրոյ» ստացում է անձամբ Սերժ Սարգսեանից, իսկ արգելքը սրբօրէն պահպանում է Մաքսայինը: Այդպէս

եղել է անցած 8 տարիներին եւ այդպէս է նաեւ հիմա: Ջարդոնի արտահանման մենաշնորհը պատկանում է «Մետեքսիմ» ընկերութեանը, որի տէրը ԱԱԾ նախկին փոխտնօրէն Գրիգոր Յարութիւնեանի եղբայրն է՝ Միքայէլ Յարութիւնեանը: Այս ընկերութիւնը ջարդոն արտահանում է առանց որեւէ խոչընդոտի: Միւսները փոքր խմբաքանակներ արտահանելու քվոտաները ստանում են հենց այս ընկերութեան միջոցով: Նրանց համար գործում է հետեւեալ մեխանիզմը. ասենք՝ երկար աղաչանքներից յետոյ ստացել ես ջարդոն արտահանելու քվոտա: Քեզ ասում են, որ պէտք է մի կլորիկ գումար փոխանցես մի ինչ-որ հաշուհաճարի: Բայց որպէսզի դու չիմանաս, թէ ինչ հաշիւ է դա, ում է պատկանում, քեզ հետ մի մարդ են զննում, դու կանխիկ գումարը ձեռքիդ նրա հետ մտնում ես բանկ, փողը տալիս բանկի աշխատակցին: Սակայն հաշուհաճարը, որին պէտք է վճարես այդ գումարը, թղթի վրայ գրուած տալիս է քո հետ եկած մարդը, վճարման կտրօն էլ, բնականաբար, հենց նա է վերցնում: Այս գործողութիւնից յետոյ դու ազատ ես եւ կարող ես արտահանել: Բնականաբար, վերը նշուած քվոտաները, բոլոր կարգի վճարումները բացարձակ ապօրինի են եւ ոչ պաշտօնական: Սա՝ մեխանիզմների մասին: Հիմա անցնենք թուերին: Մետաղի ջարդոն կուտակելու համար այն պէտք է գնել կազմակերպութիւններից եւ անհատ քաղաքացիներից: Եթէ դուք ուզում եք վաճառել ձեր ունեցած ջարդոնը, սպա ձեզանից այն կը գնեն մէկ տոննա առաւելագոյնը 110-120 դոլարով: Միջազգային շուկայում այն արժէ 450-500 դո-

լար: Կախուած նրանից՝ ջարդոնը կ'արտահանէք գնացքով, թէ բեռնատարներով, ձեր մաքուր եկամուտը կը կազմի 200-300 դոլար իւրաքանչիւր տոննայից:

Որպէսզի հասկանալի լինի, թէ ինչ թուերի մասին է խօսքը, նշենք, որ ըստ պաշտօնական վիճակագրութեան՝ այս տարուայ առաջին հինգ ամիսներին Հայաստանից արտահանուել է 31 հազար տոննա սեւ մետաղի ջարդոն: Եթէ համեատ հաշուարկներ անենք, ապա այդ քանակութեամբ ջարդոնն արտահանողը իր գրպանն է դրել 6-ից 9 միլիոն դոլար: Եթէ ջարդոնի արտահանումը մոնոպոլիզացուած չլինէր, ապա այս եկամուտը կը բաշխուէր բազմաթիւ տնտեսավարող սուբեկտներին միջոցաւ:

Այս ամէնին ներսից քաջածանօթ մեր աղբիւրների պնդմամբ, Սերժ Սարգսեանը մէկ-մէկ լաւութիւններ է անում որոշ մարդկանց կամ կառույցների՝ նրանց ջարդոն արտահանելու քվոտա տրամադրելով:

Հիմա մի այնպիսի իրավիճակ է ստեղծուել, որ այն ընկերութիւնները, որոնց մօտ այս կամ այն պատճառով սեւ մետաղի ջարդոն է կուտակուում, աշխատում են հնարաւորինս թաքցնել այն՝ սպասելով այն լուսաւոր օրուան, երբ իրենց ջարդոնը կը կարողանան իրենք արտահանել, իրենք էլ եկամուտ ստանալ: Սակայն բոլոր այն դէպքերում, երբ թաքցուած ջարդոնը յայտնաբերուում է, տուեալ ընկերութիւնները ենթարկուում են ԱԱԾ-ի, ԿՀԴՊ-ի եւ նմանատիպ այլ կառույցների յարձակումներին: Այնպէս որ, մետաղի ջարդոնի արտահանումը եղել է եւ կայ Սերժ Սարգսեանի անձնական բիզնեսը: ՀԱՅԿ ԳԻՌԳԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»



ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ՝  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱԻԹԵԱՆ  
Գեո. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՍՄԲԱՏ ԱՅՎԱԶԵԱՆ.

### «ԱՌԱՋ ԴԵՊԻ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Յանցագործ վարչախմբի օրերը հաշուած են, պինդ մնացէք», - Յուլիս 28-ին դատարանի դահլիճ մտնելով՝ յայտարարեց «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ, պետեկամուտների նախկին նախարար Սմբատ Այվազեանը: Դահլիճը նրան դիմաւորեց «Ազատութիւն» վանկարկումներով: Իսկ դատարանի շէնքի առջեւ հաւաքուած համաժողովրդական շարժման համակիրները դատական նիստի ամբողջ պրոցէսի ընթացքում վանկարկում էին «ազատ, անկախ Հայաստան»:



Սմբատ Այվազեան դատավարութեան ընթացքին

Դատարանի դահլիճում կրկնուեց նախորդ նիստում տեղի ունեցածը. կրկին երկու շաբթ զբաղեցրել էին երիտասարդներ, որոնք հետագայում պարզուեց, որ ոստիկանութեան Երեւանի եւ Կենտրոնի բաժնի օպերլիազորներն են: Սմբատ Այվազեանի հարազատների մեծ մասը նորից հնարաւորութիւն չունեցաւ մտնել դատարան եւ տեսնել իրենց հարազատին:

Երբ Այվազեանի շահերի ներկայացուցիչ Լուսինէ Սահակեանը միջնորդեց այդ տղաներին դուրս հրաւիրել եւ նրանց փոխարէն թոյլ տալ դահլիճ մտնել Սմբատ Այվազեանի հարազատներին, դատաւորը նկատեց, որ ինքը որեւէ օրէնքով իրաւունք չունի այդպէս վարուել: «Դա բարոյական խնդիր է, ես ինչ անեմ», - ասաց դատաւորը: Իսկ ոստիկանները ոչ միայն անդրդուեցին էին, այլեւ տարբեր առիթներով վիճաբանութեան տեղիք էին տալիս եւ նոյնիսկ այն մարդկանց, ովքեր պահանջում էին դուրս գալ դահլիճից, որովհետեւ

իրենց չեն ճանաչում, սպառնում էին՝ թէ «չուտով կը ճանաչես»: Նրանք այդպէս էլ ամբողջ նիստին մնացին դահլիճում. իսկ հիմնական պատճառը իրենց «տուժած» ընկերոջը աջակցելն էր. մի խօսքով տուժողի ու վկաների «աջակցութեան խումբ»-ն էր:

Սմբատ Այվազեանը յայտարարելով, թէ քանի որ սա քաղաքական հնչեղութիւն ունեցող գործ է եւ շատերն են ուզում մասնակցել նիստին, դատարանին միջնորդեց կամ ապահովել բոլոր ցանկացողների մասնակցութիւնը, կամ դրսում տեղադրել միկրոֆոններ, որպէսզի դրսում հաւաքուածներն էլ լսեն: «Սա քաղաքական հնչեղութիւն ունեցող բացառիկ գործ է, այլ սովորական, շաբթային քրէական գործ, որի քննութեան համար որեւէ օրէնքով նախատեսուած չէ դնել միկրոֆոններ տեղադրել եւ ապահովել նիստի հեռարձակումը», - ասաց դատաւորը:

## ՄԻԱԿՈՐՈՒԵԼ ԵՆ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԴԵՍ

Իրենք իրենց աւանդական հայրենասիրական ընդդիմութիւն, երկրորդ ուժ համարող ՍԻՄ, ԱԻՄ, ՀԱԿ, ՀՔԴՄ, ՀԴԿ, ՄԿԿ կուսակցութիւնները, որոնք կոնսուլտացիաներ են անում երկրի քաղաքական խնդիրների շուրջ, միաւորուել են պաշարելու առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ նրա շուրջ հաւաքուած ուժերի դէմ: «Հայելի» ակումբ հրաւիրուած ՍԻՄ նախագահ Հայկ Բաբուխանեանը բառացի այդպէս չասաց, բայց նրա խօսքերի իմաստը սա էր:

Աւելին, դա նկատեց նաեւ նրա հետ բանավիճող Աժ նախկին փոխխօսնակ Արա Սահակեանը, որը դիմեց լրագիրներին.. «Դուք հասկացաք, չէ՞», որ միաւորումը ստեղծուած է Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ»:

Հայկ Բաբուխանեանը հաւաքուած լրագրողներին ամէն կերպ

փորձում էր համոզել, որ այդ միաւորումը վայելում է հասարակութեան 60 տոկոսի համակրանքը: Ըստ նրա, դա հենց այն զանգուածն է, որ չի քուէարկել ոչ իշխանութեան, եւ ոչ էլ Լեւոն Տէր-Պետրոսեանի օգտին:

Հարց եղաւ, թէ 60 տոկոս ժողովրդի համակրանքը վայելող «աւանդական հայրենասիրական ընդդիմութիւնը» ծանր չի տանում այն փաստը, որ 60 տոկոս ունենալով 40 տոկոս հասարակութեան համակրանք վայելող կուսակցութիւնն է իշխում երկիրը:

«Գիտէք, խորհրդարանում ներկայանալ, չնրկայանալը կուսակցութեան համար առաջնահերթ խնդիրը չի», - ասաց Հայկ Բաբուխանեանը, ապա նաեւ աւելացրեց, որ նրանք չունեն նաեւ իշխանափոխութիւն անելու խնդիր:

## ԱՇՆԱԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Կ'ԱՆՑԿԱՑՈՒՆ ԱՏՕ-Ի ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:  
ՆԱՏՕ-ի Գործընկերութիւն յանուն խաղաղութեան ծրագրի շրջանակներում Սեպտեմբերի 29-ից Հոկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատուածում Հայաստանում անցկացուելու է «Համատեղ աղեղ/նիզակակիր - 08» զօրավարժութիւնը:

Զօրավարժութեան նպատակն է կատարելագործել ՆԱՏՕ-ի եւ այլ ուժերի փոխգործունակութիւնը: Սցենարը հիմնուելու է ՄԱԿ-ի կողմ

միջ լիազօրուած՝ ՆԱՏՕ-ի գլխաւորած ձգնաժամերի արձագանքման գործողութիւնների վրայ:

Զօրավարժութիւնում ներգրաւուելու է շուրջ 1100 զինծառայող 21 երկրից, որից 7-ը՝ ՆԱՏՕ-ի անդամ, 12-ը՝ «Գործընկերութիւն յանուն խաղաղութեան» ծրագրում ընդգրկուած, ինչպէս նաեւ այլ գործընկեր երկրներից եւ «Ստամբուլեան համագործակցութեան նախաձեռնութեան» անդամ Արաբական Միացեալ Էմիր-

## ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ՔԻՉ ՄՆԱՑ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հիւսիսային պողոտայում մարդիկ աննախադէպ ոգևորուած եւ ուրախ էին: Յուլիս 28-ին Քաղաքական գրասանքին միացաւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:



Լեւոն Տէր-Պետրոսեան ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանի ընկերակցութեամբ կը շրջակայի Հիւսիսային պողոտայի վրայ

«Լեւոն նախագահ» վանկարկումներով ժամը 21.30-ի սահմաններում Հիւսիսային պողոտայի նստացոյցի մասնակիցները դիմաւորեցին իրենց առաջնորդին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

Յուլիսի 4-ի հանրահաւաքից յետոյ, որն աւարտուեց աննախադէպ մարդաշատ երթով եւ Հիւսիսային պողոտայում նստացոյցով, սա Տէր-Պետրոսեանի առաջին այցն էր Հիւսիսային պողոտայ:

Առաջին նախագահը ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանի ուղեկցութեամբ մօտ 30 րոպէ շրջեց Հիւսիսային պողոտայում եւ ողջունեց իր համակիրներին: «Ե՛րբ ենք ազատուելու այս աւագակեպտութիւնից: Ե՛րբ են պատժուել Սերժի ու Քոչարեանը: Ե՛րբ ենք ապրելու

մեր երազած ազատ, անկախ Հայաստանում»: Միմեանց յաջորդող հարցերին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը մէկ պատասխան տուեց. «Քիչ մնաց»:

Առաջին նախագահի հեռանալուց յետոյ, Հիւսիսային պողոտայում դեռ երկար վանկարկում էին «Լեւոն նախագահ»: Հեռանալուց առաջ Տէր-Պետրոսեանն իր համակիրներին խոստացաւ աւելի յաճախ անակնկալներ մատուցել, ինչպէս նաեւ պարբերաբար մասնակցել քաղաքական գրասանքներին:

## ՓՈԽՈՒԵՑ ԲԱՆՈՒՉԵԱՆԻ ԵՒ ԶՈՒՐԱԲԵԱՆԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Երեւանի Մատենադարանի փոխտնօրէն Արշակ Բանուչեանի նկատմամբ խափանման միջոցը փոխուել է՝ կալանքը փոխարինուել է հանրապետութիւնից չհեռանալու մասին ստորագրութեամբ: Նախաքննական մարմնին միջնորդութեամբ դիմել էր Բանուչեանի շահերի պաշտպան Ստեփան Ոսկանեանը: Քննչական խմբի ղեկավարը քննարկել եւ պաշտպանի միջնորդութիւնը բաւարարելու մասին որոշում է կայացրել՝ նկատի ունենալով, որ վերացել է Բանուչեանին կալանքի տակ պահելու անհրաժեշտութիւնը:

Յիշեցնենք, որ Մատենադարանի փոխտնօրէնը կալանաւորուած էր Մարտի 27-ից՝ յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ յատուկ քննչական ծառայութիւնում քննուող գործի

շրջանակներում: Փոխուել է նաեւ Հայոց համագալին շարժման վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեանի նկատմամբ խափանման միջոցը՝ կալանքը փոխարինուել է չհեռանալու մասին ստորագրութեամբ:

Ինչպէս Մարտի 1-2-ի իրադարձութիւնները եւ դրանց պատճառներն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի նիստում յայտնեց Յատուկ քննչական ծառայութեան աւագ քննիչ Վահագն Յարութիւնեանը, Զուրաբեանի խափանման միջոցը փոխելու ցուցում է տուել գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը:

Հայոց Համագալին Շարժման վարչութեան նախագահը կալանաւորուել էր Մարտի 10-ին՝ «պետական իշխանութիւնը իւրացնելու» մեղադրանքով:

## ՀՀԿ ԳԱՂԱՓԱՐԱՆՕՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

Հայաստանի «Հանրապետական» կուսակցութիւնը կողմնակից է թուրքիայի հետ առանց նախապայմանների դիւանագիտական յարաբերութիւնների հաստատմանը: Այս մտայնութիւնով ու գաղափարախօսութեամբ շարժուել է նաեւ ՀՀԿ նախագահ Անդրանիկ Մարգարեանը՝ տարիներ առաջ իր հարցազրոյցներից մէկում, խօսելով հայ-թուրքական յարաբերութեան մասին, նշել է, որ «Հանրապետականը» կողմ է առանց նախապայմանների յարաբերութիւնների ստեղծմանը: Այս մասին լրագրողներին հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀԿ մամուլի խօսնակ էդուրադ Շարմազանովը: ՀՀԿ-ն եւ

իշխանութիւնները շահագրգռուած են, որպէսզի թուրքիան մտնի Եւրամիութիւն, քանի որ այդ դէպքում կ'ունենանք աւելի կանխատեսելի հարեւան», - նշեց բանախօսը:

Լրագրողներին այն հարցին, թէ արդեօք ՀՀԿ-ի եւ Ռոբերդ Քոչարեանի միջեւ չի եղել է հակասութիւն հայ-թուրքական յարաբերութիւնների հարցում եւ արդեօք Ռոբերդ Քոչարեանի վարած քաղաքականութիւնն էլ բխել է ՀՀԿ գաղափարախօսութիւնից, նա կրկին շեշտեց կուսակցութեան գաղափարախօսութիւնը՝ առանց նախապայմանների յարաբերութիւնների հաստատում՝ եզրակացութիւններն ու մեկնաբանութիւնները թողնելով լրագրողներին:

Ըստ է. Շարմազանովի, սահմանների բացումը չի նշանակում, որ ընդունուած ենք, որ չի եղել Յեղասպանութիւն, այլ 21-րդ դարում պէտք է գնալ պատեր քանդելու, ոչ թէ պատեր կառուցելու ճանապարհով:

ըութիւններից: Զօրավարժութիւնը ղեկավարելու է Դաւիթբեկ հրամանատարութեան ցամաքային բաղադրիչի Հայդելբերգի կենտրոնակայանի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ռուանդ Քաթերը:



ԼՈՒՐԵՐ

ԱԼԻ ԲԱԲԱԶԱՆ. «ԹՈՒՐԹԻԱՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ ՍՏԵՂԾԵԼ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը Նիւ Եորքում կայացած ասուլիսում յայտարարել է, թէ իր երկիրը «ցանկանում է Հայաստանի հետ երկխոսութեան միտումը ստեղծել»:



Թուրքիայի Արտաքին գործոց նախարար Ալի Բաբաջան

«Թուրքիայի նախագահը, վարչապետը եւ արտգործնախարարը նամակներ են չղել իրենց հայաստանցի գործընկերներին Հայաստանում անցկացուած վերջին ընտրութիւններից յետոյ, եւ այդ նամակների նպատակն էր՝ հայաստանեան նոր վարչակազմի հետ երկխոսութեան նոր դուռ բացել», - «Անտոլիա» գործակալութեան վկայութեամբ՝ ասել է Բաբաջանը:

զաւորմանը միտուած առաջարկներ հնչեցնելուց յետոյ:

Ալի Բաբաջանը վստահեցրել է, որ Թուրքիան ձգտում է խնդիրներ չունենալ հարեւանների հետ, եւ յաւելել է. - «Բնականաբար, մենք նաեւ ակնկալում ենք որոշ կոնկրետ քայլեր միւս կողմից»:

Նշելով, թէ հաւատում է, որ Թուրքիայի խնդիրները կարող են լուծուել երկխոսութեան ճանապարհով, նախարարը շեշտել է 1915 թուականի իրադարձութիւնները ուսումնասիրելու համար պատմաբանների համատեղ յանձնաժողով ստեղծելու կարեւորութիւնը:

Թուրքական «Հուրիյէթ» օրաթերթը երկու երկրների միջեւ յարաբերութիւնների վերականգնմանն ուղղուած ջանքերի նշան է համարում Թուրք եւ հայ պաշտօնեաների հանդիպումը, որը, ըստ Թերթի, կայացել է Շուշի քաղաքի մայրաքաղաք ժընեւում Յուլիսի 8-ին՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի կողմից հայ - Թուրքական յարաբերութիւնների կար-

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿՈՉԸ ԿՐԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Համաժողովրդական շարժումը յայտարարութիւն է տարածել Զաւախքում ստեղծուած իրավիճակի առիթով:

Համաժողովրդական շարժման կենտրոնն իր անհանգստութիւնն է յայտնում Զաւախքում ստեղծուած իրավիճակի կապակցութեամբ: Խորը մտահոգութիւն են առաջացնում օրերս տեղի ունեցած պայթիւններն ու կրակոցները, որոնց հետեւանքով կա երկու զոհ:

Այսօր էլ, փոխանակ հանդէս բերուելը յատակ մօտեցում կատարուածի վերաբերեալ, իշխանութիւնները սահմանափակուած են անհետեւ յայտարարութիւններով, հիւսաթափութիւն եւ անտարբերութիւն առաջացնելով մեր հայրենակիցների շրջանում:

Բարեկամական վրաստանի հետ ռազմավարական համագործակցութեան կողմնակիցը լինելով, Համաժողովրդական շարժումը մշտապէս կարեւորել է Զաւախքում ժողովրդավարական գործընթացների խորացման, հասարակական կազմակերպութիւնների կայացման, մարդու իրաւունքների պաշտպանութեան աստիճանի բարձրացման, հայ բնակչութեան ինքնակառավարման եւ լեզուամշակութային իրաւունքներին առնչուող խնդիրները: Կոչ ենք անում վրաստանի իշխանութիւններին այնպիսի անհրաժեշտ եւ համարժէք միջոցներ ձեռնարկել իրավիճակի կարգաւորման նպատակով, որ որեւէ կերպ չտուժեն Զաւախքիցիների հիմնարար իրաւունքները, ազատութիւնները եւ արժանապատուութիւնը:

Մենք դատապարտում ենք Հայաստանի իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը տարածաշրջանի նկատմամբ, որը աչքի է ընկնում Զաւախքում առկայ խնդիրների շարունակական անտեսմամբ եւ վրաստանի իշխանութիւնների հետ համագործակցաբար դրանք լուծելու անկարողութեամբ: Դրա փոխարէն Հայաստանի իշխանութիւնները մշտապէս օգտագործել են Զաւախքի բնակչութեանը իրենց նպատակների համար, մասնաւորապէս ապօրինաբար ներգրաւուելով վերջիններիս հայաստանեան ընտրական միջոցառումներում:

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՑԱՒ

Շարունակուած էջ 1-էն  
ուում է Հայ Ազգային Կոնգրեսը: Հայ իրականութեան առաջին քաղաքական կուսակցութեան՝ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան վարչութիւնը որոշում է ընդունել մտնելու Հայ Ազգային Կոնգրեսի շարքերը: Մայր կուսակցութիւնը նաեւ կոչ է անում Ազգի եւ Հայրենիքի ճակատագրով մտահոգ բոլոր քաղաքական ուժերին յայտարարել ՀԱԿ-ին միանալու իրենց պատրաստակամութեան մասին՝ մեր ժողովրդի յաղթանակի էլ աւելի մօտեցնելու համար: Յարկթանակը մերն է լինելու եւ մենք կերտելու ենք Մեր Երազի Երկիր Հայաստանը», Կ'եզրակացնէ Հնչակեան Կու-

սակցութեան յայտարարութիւնը: Միս կողմէ, Հայաստանի Ազգային ժողովէն ներս ներկայացուած միակ ընդդիմադիր ուժը՝ «Ժառանգութիւն» կուսակցութիւնը յայտարարեց թէ, վերջնական որոշում չէ ընդունած Կոնգրեսին միանալու-չմիանալու վերաբերեալ:

Կուսակցութեան վարչութեան նախագահ Անահիտ Բախշեանը փոխանցեց, որ վարչութեան նիստին ընդունուած է հետեւեալ որոշումը. - «Հայ Ազգային Կոնգրեսի ծրագրային եւ աշխատանքային փաստաթղթերի ընդունումից յետոյ քննարկել նրա հետ համագործակցութեան եւ գործընկերութեան բոլոր հնարաւոր ձեւերը»:

ՀՐԱՆԴ ԴԻՆՔԸ ԴԻՄԵԼ ԷՐ ՀՐԱԶԵՆ ԿՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՄԵՐԺՈՒՄ ՍՏԱՑԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: 2007 թուականին սպանուած «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքը ժամանակին դիմել էր Թուրքիայի համապատասխան մարմիններին՝ հրազէն կրելու թոյլատուութիւն ստանալու համար, ու մերժում էր ստացել:

Թուրքական լրատուամիջոցների փոխանցմամբ, այդ մասին երկրի խորհրդարանի Դինքի սպանութեան հանգամանքներն ուսումնասիրող ենթախննարկող յայտնել է ոստիկանութեան լրատուներից մէկը, ով, ինչպէս հաղորդուած է, հայկական ծագում ունի:

Դինքի մերձաւոր շրջապատում ելուժուած ունեցող լրատուն, որի անունը չի հրապարակուած (նշուած են միայն սկզբնատուները՝ Հ.Ա.), ինչպէս գրել է «Հիւրիյէթ» թերթը, հետեւել է «Ակօս»-ի խմբագրապետին եւ, հաւանաբար, հայկական արմատներ ունի՝ դատելով ազգանունից:

Ըստ լրատուի՝ ենթախննարկող յայտնեց տեղեկատուութեան, Դինքը դիմել է հրազէն կրելու թոյլատուութիւն ստանալու համար ու մերժում է ստացել: Լրատուն ասել է նաեւ, որ տեղեկ չէ, թէ մերժում ստանալու կապակցութեամբ որ մարմին է բողոքել Դինքը:

Հրանդ Դինքի ընտանիքի շահերը ներկայացնող փաստաբան էրդել Դողանը յայտնել է, որ Դինքը «գիտեր, որ հետապնդուած է»:

«Անհատը, որը պնդում էր, թէ սպանալիքներ է ստանում, դիմել էր զէնք կրելու թոյլատուութիւն ստանալու համար ու մերժում ստացել: Սա մարդու իրաւունքների խախտում է», - յայտարարել է փաստաբանը:

ԵԱՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՅԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

գործընթացը»:

Յետընտրական իրադարձութիւններու անկախ հետաքննութեան առնչութեամբ Լուիս Մարիա Տէ Պուչ շեշտած է, թէ «յստակ է, որ առանց Ազգային ժողովի կողմէ ստեղծուած յանձնաժողովի աշխատանքներուն Պր. Տէր-Պետրոսեանին աստարող ընդդիմութեան մասնակցութեան յանձնաժողովի գործունէութիւնը եւ եզրակացութիւնները չեն կրնար համապատասխանել վեհաժողովի պահանջած՝ անկողմնակալութեան եւ հաւաստիութեան չափանիշներուն»:

Հետեւեալ հարցազրուիւթեան, «վեհաժողովի նախագահը ամբողջութեամբ կը սատարէ մարդու իրաւունքներու յանձնակատար թոմաս Համմարբերգի առաջարկները՝ Մարտ 1-2-ի իրադարձութիւններուն առնչուող փաստերու վերահանման նպատակով ստեղծել հաւասարութեան եւ համախոհութեան վրայ հիմնուած ու միջազգային

փորձագէտներ ընդգրկող առանձին յանձնաժողով»:

ԵՆԽՎ-ի նախագահը ըսած է, որ այդ առաջարկները սկզբունքորէն ընդունելի են թէ՛ իշխանութիւններուն եւ թէ՛ ընդդիմութեան համար:

Լուիս Մարիա Տէ Պուչ շեշտած է նաեւ, որ Հայաստանի իշխանութիւնները չպէտք է սպասեն մինչեւ Յունուար՝ վերոյիշեալ ուղղութիւններով շօշափելի արդիւնքներու հասնելու համար. - «Կարելոր է, որպէսզի իշխանութիւնները ձեռք ձգուած եւ անշրջելի յառաջընթացի վերաբերեալ յստակ ուղերձ յղեն վեհաժողովին մինչեւ Մոնիտորինգի յանձնաժողովի սեպտեմբերեան նիստը, այսպէս առկայ է հետեւանքներու վտանգ վեհաժողովի աշխատանքին նստաշրջանին»:

Լուիս Մարի Տէ Պուչ Երեւանէն մեկնելէ առաջ տուած էր խիստ ազդարարութիւն, յայտարարելով որ ԵՆԽՎ-ի բանաձեւերով սահմանուած դրական տեղաշարժեր չարձանագրուին, ապա հետեւանքները կրնան Հայաստանի համար ըլլալ «աղէտալի»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ ԿԸ ՄՆԱՅ ՈՉ ԱԶԱՏ

Շարունակուած էջ 1-էն

կարող է արտայայտուել լրագրողներու նկատմամբ ֆիզիկական բռնութիւններով եւ անոր դիմաց անպատժելիութեամբ, կամ ալ աւելի անտեսանելի՝ ինչպէս, ըսենք, Ռուսաստանի մէջ, ուր պետութեան կողմէ հիմնադրուած կազմակերպութիւնները կը գնեն լրատուական դաշտի վրայ գործող ընկերութիւնները եւ այդպիսով իսկ իշխանութեան ղեկին կանգնած մարդիկ հնարաւորութիւն կու տան վերահսկողութեան տակ առնել խմբագրական աշխատանքը»:

այս երկրներու կառավարութիւններէն որեւէ մէկը կրնայ էական յառաջընթաց արձանագրել կուսակցի դէմ պայքարին կամ արդիւնաւէտ կառավարման ոլորտին մէջ»:

Freedom House-ը ոչ ազատ մամուլ ունեցող երկրներու շարքին արդէն յաջորդական հինգերորդ տարին ըլլալով կը դասէ նաեւ Հայաստանը, ուր, հեղինակաւոր կազմակերպութեան գնահատականով՝ «խօսքի ազատութիւնը օրէնքներով երաշխաւորուած է, գործնականին մէջ՝ վտանգուած»:

Մամուլի ազատութեան վերաբերեալ վերջին տարեկան գեկոյցին մէջ՝ Հայաստանին վերաբերող բաժնով Freedom House-ը հաստատած է. - «Մասնաւոր թերթերէն քչերն են ինքնաֆինանսաւորուող, եւ մեծ մասը կախուած են գործարար շրջանակներէ ու իշխանական կապերէ: Հեռուստաընկերութիւններու մեծ մասը եւս կը տնօրինեն կամ մեծ իշխանամէտ քաղաքական գործիչները, կամ իշխող կուսակցութեան հետ կապեր ունեցող գործարարները»:

«Այս երկրներու մեծ մասին մէջ իշխանութիւնները ունին ահաբեկի առաւելութիւն իրավիճակը վերահսկելու հարցով՝ ի դէմս իրենց իսկ ենթարկուող դատաւորներու, ինչի արդիւնքով գրպարտութեան մասին օրէնքը կ'օգտագործուի լրագրողներուն պատժելու եւ դատարանի առջեւ կանգնեցնելու համար», - աւելցուցած է Քրիսթոֆըր Ուոքըրը եւ ընդգծած. - «Առանց մամուլի ազատութեան դժուար է պատկերացնել, որ

ԱԶԳԱՅԻՆ

ՓՐԿԵԼ ՐԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՐՑԱԽԸ

ԿՈՆՍԱԿՏԱՆԻ ԲԱԼԱԿԻՐԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՔԻ ԴՈԿՏՈՐ, ՓՐՈՖԵՍՈՐ

Յետադարձ հայեացք ձգելով վերջին տասնամեակի վրայ՝ մենք յաճախ ենք չիշուծ Յովհաննէս Թումանեանի խօսքը. «Մինչ այսօր մենք չենք ապրել, այլ մահացել ենք»: Սա անցեալի մասին: Իսկ ի՞նչ է սպասուում մեզ ապագայում: Առաջիկայում մեր ժողովուրդը եւ մեր պետութիւնը ի՞նչ մարտահրաւէրների առաջ կը կանգնեն: Կարո՞ղ է մեզանից ոմն մէկը պատկերացնել, թէ ի՞նչ կը պատահի մի քանի տարի անց. Արցախը՝ առանց պատերազմի, նոյնիսկ՝ առանց կրակոցի կարող է կրկին դառնալ ատրպէճանական: Կամ, օրինակ, մեկնելով Սեւանա լիճ, հայը վերապրում է այն, ինչը վերապրում է Մասիսին նայելիս՝ այդքան թանկագին եւ մօտ, սակայն, աւաղ, այդքան օտար: Կամ էլ թէ չէ ուղեւորութիւնը Դիլիջան կամ Ջերմուկ՝ հաւասարագոր է Բաղեն-Բաղեն կամ շուէջարական Ալպեր ուղեւորութեան: Ըստ որում՝ եթէ Արցախին յաւակնում է աւանդական թշնամին, ապա Սեւանը, Ջերմուկը կամ էլ Մաղկաձորը կարող են անցնել աւանդական բարեկամ համարուողին:

- Ֆանտաստիկա է, - կ'ասէք դուք: Սակայն այն կարող է դառնալ իրականութիւն, եթէ պետութիւնը, հասարակութիւնը եւ առանձին անհատներ, ովքեր իրենց հայ են համարում, չանեն ամէնը, ինչը կարողանա է իրենցից, որպէսզի դա երբէք տեղի չունենայ: Քաղաքական եւ տնտեսական գալիք սպառնալիքները կարելի է կանխատեսել եւ արժանապատուորեն դիմակայել դրանց, եթէ մենք կողմնորոշուենք գլխաւոր հարցում՝ ո՞վ պէտք է մեզ ղեկավարի: Եթէ մենք գտնենք «Ո՞վ է կարողունակ իրականացնելու համակարգային եւ կառուցուած քայլին փոփոխութիւններ իշխանութեան բոլոր ենթակառուցներում», «Մասնագիտական ի՞նչ մակարդակ ունեն մեր քաղաքական գործիչները, իրաւաբանները, դիւանագէտները եւ մենեջերները» հարցերի պատասխանները: Այս դէպքում ես անհատական յանձնարարութիւններ չեմ տայ: Ուղղակի մտածէք եւ համեմատէք: Ձեր դիտարկումները այսօր կարող են հիմնուել որոշակի փաստերի վրայ, քանի որ մեզ պարտադրուած ղեկավարը արդէն կողմնորոշուել է

կողմնորոշուել հարցում, որը պէտք է ղեկավարի երկիրը յառաջիկայ տարիներին: Ընտրութիւնը բաւականին սահմանափակուած էր: Կապուած կլանային պարտաւորութիւնների եւ ընդդիմութեան կոլաբորացիոնիստների, այսինքն՝ հակառակ բեւեռի հետ համագործակցողների խոստումների հետ՝ նա ստիպուած է առանցքային պաշտօններում նշանակել մարդկանց, որոնց գործունէութեան այդ մակարդակը հակացուցուած է: «Նոր» կառավարութեան կազմը, որի առաջին քայլերը զգաստացնում են, արդէն լաւ յայտնի է: Այս կողմի դիրքորոշումը լաւ յայտնի է: Միւս կողմից՝ մենք ունենք Համաժողովրդական Շարժում, որն ընդունակ է իշխանութեան բերել նրանց, ում կարիքը երկիրն այժմ ունի: Հայ ժողովուրդը, որ միացաւ Շարժմանը, այլեւս այն ժողովուրդը չէ, ինչ մի կէս տարի առաջ էր: Նա գիտակցաբար գնաց առաջնորդի ետեւից, ով արդէն մէկ անգամ ղեկավարել է համագային շարժումը եւ իր ժողովրդին տուել պատմութեան նշանակալի յաղթանակները: Դա հիմք է տալիս հաւատալու, որ քաղաքական եւ տնտեսական նոր սպառնալիքները ժողովուրդը կը յաղթահարի՝ նրա գլխաւորութեամբ: Բայց կարծում եմ՝ արժէ քննել, թէ յառաջիկայում ի՞նչ է մեզ սպասուում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՐՏԱՅՐԱԲԵՐ

Դատելով Լեւոնային Ղարաբաղի շուրջ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի ընդունած բանաձեւին Հայաստանի կառավարութեան արձագանքից՝ այս հիմնախնդրի շուրջ նոր՝ հակա մօտեցումներ չի կարելի ակնկալել: Կառավարութիւնը, վերջին հաշուով, այն կարծիքին է, որ աշխատում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որն ունի հարցի սեփական տեսակէտը, «արդարացի եւ հաշուեկշռուած առաջարկութիւնները բանակցային սեղանի վրայ են, եւ յատկապէս նրանք վճռորոշ կը լինեն Ղարաբաղեան հիմնախնդրի հանգուցալուծելիս: Սակայն Կոստովոյի նախադէպը Ատրպէյճանին ցոյց տուեց, որ տարածքային ամբողջականութեան սկզբունքը ամբողջապէս կորցրել է իր արդիականութիւնը: Եւ թէպէտ Գլխաւոր ասամբլեայի ընդունած որոշումը ենթակալ չէ պարտադիր կատարման, Ատրպէյճանի քայլերը, ՄԱԿ-ի բանաձեւի հետ կապուած, հեռուն են տանում: Ատրպէյճանին պէտք

չեն բանաձեւի 7 կէտերը: Սրանցից վեցը աչքին թող են փչում: Իսկ գլխաւորն այն կէտն է, որը ենթադրում է փախստականների եւ հարկադիր գաղթականների վերադարձ բնակութեան վայրեր: Ատրպէյճանը համոզուած էր, որ այդ հարցի շուրջ նա կարող է ստանալ նշանակալի ձայներ, քանի որ գիտի, որ ազատական Եւրոպան եւ Ամերիկան չեն խոչընդոտի իրենց տները վերադառնալ կամեցող փախստականներին: Ատրպէյճանը հաստատում է, որ փախստականների թիւը գերազանցում է միլիոնը: Ղեկավարուելով հին եւ դեռ խորհրդային ժամանակներից տարածուած ասացուածքով, թէ «Խնդրիր շատ աւելին է, որպէսզի տան՝ որքան պէտք է»: Ատրպէյճանը կանխամտածուած երեք անգամ մեծացնում է փախստականների թիւը: Իրականում այս երկիրն բաւական է, որ ազատագրուած տարածքներ թոյլ տան վերադառնալու 400-600 հազար մարդկանց: Դժուար չէ կռահել, թէ ինչ քանակ կը ներկայացնեն նրանք 5 տարի անց, երբ իրենք հանրաքուէ կը պահանջեն: Այդ հանրաքուէի արդիւնքում նրանք կը հասնեն 1-ը 4-ի կամ 1-ը 3-ի յարաբերակցութեան, եւ Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակը կը հանգուցալուծուի յօգուտ Ատրպէյճանի: Իսկ ինչ վերաբերում է Ատրպէյճանի նախագահի ռազմատենչ յայտարարութիւններին՝ դրանք նպատակաւորապէս են նրան, որպէսզի կենսական կորովի մէջ պահեն Ատրպէյճանի ժողովրդին: Ակնյայտ է, որ եթէ Ատրպէյճանը իր բանակին յատկացնի ոչ թէ 1 միլիարդ, այլ նոյնիսկ 20 միլիարդ տոլար, չի յաջողուի Լեւոնային Ղարաբաղը ուժով իրեն վերադարձնելը: Այսպիսով, պէտք է գտնել ո՞վ է շարունակում աջակցել յանձախմբին հարցի պատասխանը, որպէսզի գտնուի այն հարցի պատասխանը, թէ ո՞վ է մեղաւոր, որ վերջին մի քանի տարիների ընթացքում Արցախի բնակչութիւնը միայն կրճատուեց: Եւ ինչո՞ւ կառավարողները պայմաններ չեն ստեղծել, որպէսզի ոչ միայն սահմանամերձ գիւղերի բնակիչները չլքեն իրենց բնակավայրերը, այլ հակառակը՝ նորաբնակների թիւն աւելանայ, ինչն անհրաժեշտ է մեզ ազատագրուած տարածքներում: «Բորդիւրային» մտածողութիւն ունեցող իշխանութիւնների համար դժուարընկալելի են ազգային առաջնահերթութիւնները: Նրանց համար լաւագոյնը մայրաքաղաքի մայրերը վերականգնելն է, քան 2-3 սահմանամերձ գիւղեր կառուցելը: Պատահական են այդ արարքները, թէ՞ կանխամտածուած հար-

ցը՝ սպասում է իր պատասխանին: ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՏԱՅՐԱԲԵՐ Այսօր ողջ համաշխարհային տնտեսութիւնը նաւթագազային հիմքի վրայ է: Բացառութիւնն է ի կազմում նաեւ Հայաստանը: 2009 թուականի Յունուարի 1-ից 1000 խորանարդ մեթր գազի գինը կը մօտենայ համաշխարհային գներին: Դա նշանակում է, որ գազի դիմաց հարկադրուած կը վճարեն ոչ թէ 110 տոլար, այլ 250-300 տոլար եւ գուցէ աւելին: Բացարձակ կոնկրետ կանխատեսել իրական գինը, որը Հայաստանը ապագայում կը վճարի գազի համար, դժուար է ասել, քանի որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան չափումներում ռուսական գազը քաղցրաբլիթ է եւ մտրակ: Սակայն դժուար չէ պատկերացնել, թէ ինչ փորձութիւն կը լինի դա Հայաստանի բնակչութեան համար, քանի որ էներգակիրների աճը երկու-երեք անգամ ենթադրում է միւս ապրանքների գների հակաանաճ: Հայաստանում արժույթի նոր մուտքեր չեն նախատեսուում: Հայերի մեծամասնութիւնը, ովքեր ապրում են Ամերիկայում եւ Արեւմտեան Եւրոմիութիւն, արդէն այսօր մի կերպ են ծայրը ծայրին հասցնում: Դա է պատճառը, որ Միացեալ Նահանգներից եւ Եւրոպայից հակա յաւելումներ չեն ակնկալուում (ընթացիկ տարում դրամական մուտքը կազմել է 1, 2-1, 4 միլիարդ տոլար): Դրամական մուտքի որոշ աճ հնարաւոր է Ռուսաստանում ապրող հայերից, այսինքն՝ 970 միլիոն տոլար ցուցանիշը կարող է հասնել 1 միլիարդ տոլարի: Այս աճն էլ «կիսփոխ» ինֆլյացիան: Ի դէպ, այս թուերը Հայաստանի տնտեսութեան վերաբերեալ տիտղոս մտքերի են յանգեցնում: Բոլորն են հասկանում, որ 599 միլիարդ դրամը սառցաբեկորի միայն գազաթն է: Կարող եմ հաստատել, որ դա համատեղելի է հանրապետութեան 2008 թուականի պիւլտեձին՝ 746 միլիարդ դրամ: Հանրապետութիւնը փաստացի ապրում է տրանսֆերների հաշուին Տնտեսութեան «յաջողութիւններին» մասին վկայում է այն փաստը, որ վերջին 2 տարիների ընթացքում Համաշխարհային տնտեսական համաժողովի վարկանիշային աղիւսակի համաձայն՝ Հայաստանը 79-րդ տեղից հասել է 93-րդ տեղը: Նոր կառավարութիւնը որոշել է ծախսերի ծանրութիւնը տեղափոխել ծայրայեղ աղքատութեան մէջ ապրող բնակչութեանը մատակարարող գազի

Շար.ը էջ 19

THE QUALITY AND SAFE CHOICE... AGBU PASADENA HIGH SCHOOL 2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104 (CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET) 2008-2009 SCHOOL YEAR OPEN ENROLLMENT GRADES: 9-12 COLLEGE PREPARATORY ACADEMIC PROGRAM HONORS & AP LEVEL INSTRUCTION FOR MORE INFORMATION, PLEASE CALL 626-794-0363



**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ**

**ՇԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ ՎԻՃԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ**

**ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ**

Սերժ Սարգսեանը դարձաւ ՀՀ նախագահ ընտրակեղծիքներով, ահաբեկչութեամբ կաշառակերութեամբ եւ բռնարարներով: Նկատի ունենալով սոյն թուի Մարտի 1-ի դէպքերը, Յունիսի 9-ին նրա երդման արարողութիւնը տեղի ունեցավ ժողովրդի ցնծութեան միջնորդութիւն փոխարէն՝ սուգով եւ հազարաւոր զինուորների հսկողութեան տակ, մի անգամ եւս ապացուցելով, որ նա ժողովրդի կողմից ընտրուած օրինական նախագահ չէ, հետեւաբար յարգանք չի վայելում նրա մօտ եւ էլք է փնտռում ստեղծուած վիճակից դուրս գալու համար:

Որպէս երկու իրարայայջորդ նախագահներ՝ Ռոբերտ Քոչարեանն իր ժամանակին, իսկ Սերժ Սարգսեանը այս օրերին անդրադարձան հայ ժողովրդի գագաթն հարցին՝ Հայերի Յեղասպանութեանը: Այս հարցում ՀՀ նախագահների հնարաւոր թոյլ տուած քաղաքական սխալներից օգտուած են Հայերի Յեղասպանութիւնը ուրացողները, եւ յատկապէս Թուրքիան:

2001 թ. ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի, Թուրք թղթակից Մահմեդ Ալի Բիրանդի հետ հարցազրոյցում յայտարարութիւնները, թէ «Եթէ Թուրքիա Յեղասպանութիւնը ընդունի եւ ներողութիւն խնդրի, մենք ուրիշ որեւէ պահանջ չենք կարող ունենալ», սառը ջուր լցրեց հայ ժողովրդի եւ յատկապէս սփիւռքահայերի գլխին, որոնք Յեղասպանութեան գոհերի ժառանգներն են, պաշարում են Հայերի Յեղասպանութեան ճանաչման համար ամբողջ աշխարհում եւ հատուցում պահանջում Թուրքիայից: Այդ մասին ժամանակին եւս արձագանքեցի «Դիւանագիտութիւնն, թէ՛...» յօդուածով (տե՛ս «Նոր Օր», Շաբաթ, Մարտ 3, 2001): Շատերն օգտագործեցին այս յայտարարութիւնը, որոնց թուում իսրայէլի դեսպանը. «Եւ վերջերս իսրայէլի հրեայ դեսպանը, որի թուրքական հայրենակիցները իրագործեցին Հայերի Յեղասպանութիւնը, Երեւանում լիտիօրէն յայտարարում էր, որ Հայերի Յեղասպանութիւն չի եղել՝ ուրանում էր այն» (տե՛ս «Պատերազմին ո՛չ» յօդուած, «Մասիս», Շաբաթ, Դեկտեմբեր 7, 2002): Ռոբերտ Քոչարեանի անպատասխանատու ու սխալ յայտարարութիւնը մի քիչ մեղմացնելու նպատակով մեծ ջանքեր պահանջուեցին Հայաստանի դիւանագէտներից Վարդան Օսկանեանի ղեկավարութեամբ:

Վերջին ժամանակները Հայերի Յեղասպանութեան հարցը յաճախ է արծարծուում միջազգային ասպարէզում, որը շատ դէպքերում շահարկում են գերպետութիւնները իրենց նպատակների իրագործման համար:

Հայերի Յեղասպանութեան մասին յայտարարութեամբ հանդէս է եկել նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը Յունիսի 24-ին Ռուսաստանում սփիւռքի ամենամեծ հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ:

Նշենք, որ մի քանի տարի է Հայաստանում ԱՄՆ դեսպան չկայ, քանի որ դեսպան Ջոն Էվանսը ճշմարտութիւնը՝ «Յեղասպանութիւն» բառն օգտագործելու պատճառով հեռացուեց պաշտօնից, իսկ նոր դեսպանի՝ Ռիչարդ Հոգլենդի նշանակումը չընդունուեց, քանի որ նա շարտայայտեց «Յեղասպանութիւն» բառը: Մօտ ժամանակներ Ներկայացուած դեսպանի նոր թեկնածուից՝ Մարի Յանտովիչից պահանջուում է օգտագործել «Յեղասպանութիւն» բառը, սակայն նա եւս շրջանցում է այն, նշելով, որ «...Նախագահ Պուշին, ինչպէս նաեւ երկու կուսակցութիւններէն անցեալի նախագահներու քաղաքականութիւնն է այդ եզրը չօգտագործել» (տե՛ս Յարութ Սասունեան-Ներկայացուցիչներու Տան եւ Ծերակոյտի անդամները կը քննադատեն Ամերիկայի դիւանագէտներուն Յեղասպանութիւն եզրի օգտագործումէն փախուստ տալը», «Նոր Օր», Շաբաթ, Յունիս 5, 2008, էջ 5): Հայամէտ կոնգրեսմենները քննադատում են նախագահ Պուշին եւ իր վարչակազմին, 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած Հայերի Յեղասպանութիւնը «Յեղասպանութիւն» որակելուց խուսափելու համար՝ յանուն ԱՄՆ-Թուրքիա բարեկամութեան...:

Ամերիկայի նման գերպետութեան դեսպանի նշանակումը Հայաստանում խոչընդոտների է հանդիպում հայամէտ կոնգրեսմենների եւ հայերի կողմից, վերջիններիս լոբբիստական աշխատանքի շնորհիւ, եւ այդպիսի աշխատանք կատարում է սփիւռքի բոլոր համայնքներում, որի հետեւանքով շատ խորհրդարաններում արդէն ընդունուել է Հայերի Յեղասպանութիւնը, իսկ որոշներում՝ նաեւ լրացուցիչ օրէնքներ, իրենց երկրներում Հայերի Յեղասպանութեան փաստը ժխտողներին պատժելու համար:

Ըստ Սերժ Սարգսեանի յայտարարութեան Մոսկուայում, Թուրքիան առաջարկում է ձեւաւորել մի յանձնախումբ, որը պէտք է ուսումնասիրի պատմական փաստերը եւ նշում է. «Մենք դէմ չենք այդպիսի յանձնախումբի մը ստեղծման, պայմանաւ որ երկու երկիրներուն միջեւ սահմանը բացուի: Այլապէս անիկա կրնայ դառնալ հարցը տարիներով երկարաձգելու եւ շահարկելու միջոց: Առաջիկայում ես մտադիր եմ նոր քայլերու ձեռնարկել հայ-թուրքական յարաբերութիւնները խթանելու ուղղութեամբ: Ամենայն հաւանականութեամբ, ես պիտի հրաւիրեմ Թուրքիոյ նախագահ Ապտուլլահ Կիլը Երեւան՝ միասին դիտելու համար Հայաստանի եւ Թուրքիոյ ֆուլթայլի հաւաքականներու խաղը» (տե՛ս «Նոր Հայաստան», Հինգշաբթի, Յունիս 26, 2008, առաջին էջ): «Ճիշտ այնպէս, ինչպէս Չինաստանի եւ Միացեալ Նահանգներու ժողովուրդները խանդավառութեամբ կը վերաբերուին սեղանի թենիսի (բիսկ-բոնկ) խաղին՝ մինչեւ իրենց ղեկավարութիւններու կողմէ յարաբերութիւններու լիակատար կարգաւորումը, Հայաստանի ու Թուրքիոյ ժողովուրդին պիտի միացնէ ֆուլթայլի հանդէպ սերը» (տե՛ս «Սերժ Սարգսեանի յօդուածը», «Մասիս», Շաբաթ, Յունիս 19, 2008, էջ 5):

Միւս կողմից, ՀՀ նախագահի խոսնակ Սամվել Ֆարմանեան հաստատելով Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, ասել է. «Թուրքիայի կողմից հնչեցուել է առաջարկ Յեղասպանութեանը վերաբերող պատմական փաստերն ուսումնասիրելու նպատակով փորձագէտներից կազմուած յանձնաժողով Ձեղաւորելու վերաբերելով: Մենք դէմ չենք որեւէ ուսումնասիրութեան, անգամ՝ ակնյայտ փաստերի եւ լայնօրէն ընդունուած իրողութիւնների: Ուսումնասիրութիւնը չի նշանակում փաստերի իսկութիւնը կասկածի տակ առնել» (տե՛ս «Սերժ Սարգսեանի վտանգաւոր յայտարարութիւնը Հայոց Յեղասպանութեան հարցը քննարկելու համար յանձնաժողով ստեղծելու վերաբերելով», «Մասիս», Շաբաթ, Յունիս 5, 2008, էջ

4): Նախ նշենք, որ հայ-թուրքական հաշտեցման մի յանձնախումբ ստեղծուել էր 2001 թ. Ռոբերտ Քոչարեանի նախագահութեան ժամանակ՝ Հայերի Յեղասպանութեան փաստը ուսումնասիրելու նպատակով, որից թուրքական կողմը հրաժարուեց, երբ Արդարութեան փոխանակման միջազգային կենտրոնը (International Center for Transitional Justice) 1915 թ. հայերի կոտորածը կոչեց «Յեղասպանութիւն»: Նախքան այդ, դեռ 2000 թ. «The New York Times»-ի՝ «Յունիսի 8 եւ 9-ի ամերիկեան այս աշխարհահռչակ թերթի թիւերուն մէջ լոյս տեսաւ ցնցիչ յայտարարութիւն մը, ուր հրեական Ողջակիցման ուսումնասիրութեան մարզին մէջ ականաւոր դարձած 126 մասնագէտներ հրապարակաւ կը յայտարարեն, որ հայկական Յեղասպանութիւնը անժխտելի պատմական իրողութիւն մըն է: Աւելի առաջ երթալով, այս պատմագէտները եւ իրաւաբանները կը թելադրեն Արեւմտեան երկիրներու ժողովրդական կառավարութիւններուն, որ իրենք ալ ընդունին այս իրողութիւնը եւ ճանչնան հայկական Յեղասպանութիւնը: Վերջապէս նոյն մասնագէտները կը դրդեն այդ կառավարութիւններուն որ խորհուրդ տան Թուրքիոյ խորհրդարանին եւ կառավարութեան... ընդունին հայկական Յեղասպանութիւնը...» (տե՛ս «Ողջակիցումի 126 աշխարհահռչակ մասնագէտներու շառաչուն յայտարարութիւնը Նիւ Եորք թաղմի մէջ», «Նոր օր», շաբաթ, հունիս 17, 2000, առաջին էջ):

Նշենք, որ Չինաստանի եւ Ամերիկայի մերձեցումը պինդ-պինդ խաղի միջոցով ոչ մի համեմատելու եզր չունի հայ-թուրքական յարաբերութիւնների բարեխաւման հետ՝ միասին ֆուլթայլի դիտելով, քանի որ Թուրքիան Յեղասպանութիւնն է իրագործել 1,5 միլիոն հայերի նկատմամբ՝ բռնազաւթելով նաեւ նրանց բնօրրանն ու ունեցուածքը: Իսկ ինչ վերաբերում է «...անգամ՝ ակնյայտ փաստերի եւ լայնօրէն ընդունուած իրողութիւնների» ուսումնասիրութեան, այդ իրօք նշանակում է Հայերի Յեղասպանութեան փաստը, նրա իրողութիւնը կասկածի տակ առնել, որն անթոյլատրելի, քաղաքական եւ դիւանագիտական մեծ սխալ կլինի Հայաստանի կողմից՝ չփոթի մատնելով միջազգային հանրութեանը, եւ յատկապէս

Շաբ.ը էջ 17

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՐԱԺԵՇՏ Է**  
ԵՐԻՔԷ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ**

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԵՒՆԻ ՏԵՄԵՐԱԹՆԵՐԸ ԲԱԺՆՈՒԱԾ ՄԱՆ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԲԱՆ

Քաղաքական գետնի վրայ, յատկապես Պ. Օպամայի Իրաք եւ Աֆղանիստանէն ետք, այս վերջինը լուրջ յաջողութիւն արձանագրեց ամերիկեան եւ միջազգային հանրային կարծիքներու մօտ: Ինչ որ իր կողմէ ձեռք ձգուեցաւ Իրաքի եւ Աֆղանիստանի մէջ, իրապէս կը նկատուի քաղաքական մարզէն ներս «կօլ» արձանագրելու պէս բան մը: Շիտակ է որ ինք այդ շրջապատը նախաձեռնեց իբրեւ սենսթրը, ուրիշ երկու ընկերներու հետ, եւ սակայն թէ իրաքի եւ թէ Աֆղանիստանի մէջ իր այցելութիւնը պետական ձեւի մը տակ ներկայացաւ, եւ գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, թէ ինքզինք եւ թէ զինք ընդունողները իրեն վերաբերեցան ու կարծես թէ Ամերիկայի նախագահութեան թեկնածուն ըլլար, կամ նոյնիսկ Ամերիկայի նախագահ, ապագայ: Այս ուղղութեամբ նոյնիսկ իր թեկնածութեան համաձայն կարգ մը շրջանակներու գինք քննադատելու պատճառ գտան, առարկելով թէ Ամերիկան մէկ նախագահ ունի եւ անոր իրաւասութիւնն է օտար երկիրներու հետ բանակցելու իրաւունքը: Այս հարցը յատուկ կերպով յարուցուեցաւ երբ, մանաւանդ Իրաքի մէջ, Օպամա Իրաքի վարչապետին՝ Նուրի էլ Մալիքիի հետ գրեթէ համաձայն գտնուեցան որ Ամերիկեան ուժերը Իրաքէն քաշուին շուրջ 16 ամիսներու ընթացքին: Այս «16 ամիսներ» որ Պարաքին սկզբնական լողունքը կը հանդիսանայ, Իրաքի վարչապետին, եւ անոր օգնականներու կողմէ, վերածուեցաւ «2010 թուականի», որ պարզ հաշուով մը, կը համընկնի Օպամայի «16 ամիսներու»ն: Նման յայտարարութիւն մը ըրած էր նաեւ Մալիքին գերմանական թերթի մը մէջ: Մինչեւ Օպամայի Իրաք այցելութիւնը, Պուշի իշխանութիւնը եւ հանրապետական Մքքէյն դէմ կը խօսէին ամերիկեան ուժերու ժամկէտային վերադարձի մասին, եւ իրենց յոյան այն էր որ ամերիկեան ներկայութիւնը Իրաքի մէջ կրնար եւ պետք էր «երկար տեւել», այսինքն մինչեւ վերջնական յաղթանակ: Խօսելով յաղթանակի մասին, այդքան ալ յստակ չէր թէ ինչ պետք է հասկնալ յաղթանակ ըսելով – Իրաքեան պետութեան ինքնահաստատումը, թէ քաղաքական եւ թէ մանաւանդ, գիտութեամբ եւ ապահովական իմաստով, Իրաքի մէջ ժողովրդավարական իշխանութեան մը ստեղծումը, Մերձավոր Արեւելքի այդ շրջանէն ներս, ամերիկեան ներկայութիւնը, թէ քարիւղի ապահով հոսքը դէպի Արեւմուտք, թէ Իրանեան ընթացիկ հիւլէական հետապնդումներու կառուցումը, եւ այլն: Այս բոլորը յստակ թէ քողարկուած ձեւով գոյութիւն ունին ամերիկեան արտաքին քաղաքականութեան հաշիւներուն մէջ: Օպամայի Իրաքեան յայտարարութիւններէն ետք, նոյնիսկ Պուշի բառամթերքը փոխուեցաւ, եւ փոխանակ ամիսներու ժամկէտային հարցի, Պուշ եւ իր իշխանութիւնը սկսան խօսիլ «մեկնումի հորիզոնի» մը մասին, որ շատ ալ տարբերութիւն չունի Պարաքի բանաձեւումէն: Իսկ Մքքէյն Օպաման կը քննադատէ ըսելով որ ան իրաւունք չունի «ժամկէտային» հարցերու մասին խօսելու քանի որ գիտութեամբ փորձառութիւն չունի, եւ թէ ան պարտաւոր է խորհրդակցիլ բանա-

կի դեկավար, գորավարներու հետ, որեւէ յայտարարութիւն ընելէ առաջ: Սակայն Օպամա, իր Իրաք այցելութեան ընթացքին, բացի տեղական շրջանակներէն, նաեւ շփուածներ ունեցաւ Ջօր. Փեթրաուսի եւ իր գործակիցներուն հետ, եւ չվարանեցաւ նոյն յայտարարութիւնները ունենալու: Օպամա այնքան հանգիստ ինքզինք կը զգար որ նոյնիսկ գիտութեամբ հետ պատրաստ խաղալու ժամանակ կրցաւ գտնել...:

**Saturday, November 8, 2008: St. Peter Armenian Apostolic Church 50th Anniversary Dinner and Celebration to be held at the Nazarian Center of the AGBU Manoogian Demirdjian School in Canoga Park- 6:00 p.m.**



# ՄԵԾ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՍԵՄԻՆ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԶՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Եթե տարակուսելի ճակատամարտի մը յաղթութեան համար, որուն ելքը յայտնի չէ, քաջութիւն կը պահանջուի մեզմէ, ո՞րքան հերոսանալ պէտք է ճակատամարտի մը համար, որ ի յառաջագունէ կորուսած կը նկատուի:

Նուիրական նպատակի մը կամ սրբազան գաղափարի մը յաջողութեան համար, որ անձնուրացութեամբ կը պայքարիս եւ գիտես, թէ անյաղթելի արգելքներու դիմաց կը գտնուիս ու մանաւանդ՝ աներկբայ եւ, որ կարճ ժամանակ ետք, թշնամին դիակիդ վրայէն պիտի անցնի, դուն կը մնաս անշարժ պատնէշին վրայ եւ ըստ մը իսկ չես մտածեր փախուստի մասին:

Ընդհակառակը՝ կ'արհամարհես ամէն սպառնալիք ու վերահաս մահ, ու շարժութեամբ կը սպասես, որ հերոսական խոյանքներդ պակուրին նահատակութեան փառքով:

Է՛հ, ասիկա կ'անցնի՝ դիւցազնութեան սահմանն ալ եւ կու տայ խոյանքիդ ազնագոհութեան դրոշմը:

Պարտաւոր ես ուրեմն՝ ունենալ անբեկանելի հաւատք եւ կամք, ու նաեւ՝ բոցաշունչ իտէալներէ ելեկտրականացած հոգի, միշտ հայրենիքի գերագոյն սէրէն հրավառ, որպէսզի կարենաս, նոյնիսկ բոլորովին միակ՝ կուրծքդ ցցել թշնամիին գերսպառազինումին դէմ:

Հերոսավայել մաքառողին սրտին մէջ՝ խանդավառութիւնը փրփրադէզ ալիքի պէս՝ կ'ուռի եւ կուռի կրակին մէջ՝ ան կը դառնայ մունչող առիւծ մը, մանաւանդ՝ երբ կը նկատէ պայծառ հորիզոնի մը վրայ յաղթութեան նախանշանները, որոնք կը խոստանան պճնել մարտէն մրոտած իր ճակատը լուսապակով:

Այն ըստինքն, երբ կը տեսնես, որ գետինը կը նահանջէ ոտքերուդ տակ եւ կը խորհիս, թէ բոլոր ջանքերդ ի դերեւ պիտի ելլեն, այն

ատեն է, որ դուն պէտք ունիս գերբնական ուժի, ներքին պահեստի գորութեան մթերքին, որ մաքառիս եւ ի վերջոյ համար ճակատամարտի բարեյաջող ելքին:

Բոլոր ժամանակներու մէջ դիւցազնական այս ոգին ցոլացուցեր են տեսլապաշտ պայքարողները արդարութեան եւ ճշմարտութեան սիրոյն:

Ի՞նչ ըրաւ անգոր ու անգէն հայութիւնը գոյատեւումի տատասկոտ ճամբարներուն վրայ, յատկապէս իր գերութեան դարաշրջաններուն, երբ բռնակալին բարբարոսութիւնը սեւ ամպեր կուտակեց անոր կեանքին վերը - քար ու քանդ ըրաւ անոր ոգեկան հարստութեան անփոխարինելի գանձերը:

Այդ կեղեքումի տարաբախտ օրերուն՝ բարձրացուց իր անստրուկ հոգին հզոր բարոյականով եւ յաջողեցաւ անողորմ հարուածներու ճնշումին տակ, անվհատ հաւատալ, որ լուսաճաճանչ օրը անպայման պիտի գայ ու ողջունէ իր հայրենի երկիրն ազատութեան փառքը:

Այսօր դատ մը ունինք մեր ազգային խղճմտանքին առջեւ, անլոյծ դատ մը՝ արդարագոյն խօսքով, որուն յաղթական լուծումը արագ ու դիւրին պիտի չըլլայ այս դժնդակ ու ապերախտ պայմաններուն մէջ:

Տակաւին երկար ժամանակ պիտի գրենք, պիտի ճառախօսենք, պիտի պայքարինք պարապութեան մէջ: Եւ գիտենք, որ համազգային մեր բոլոր նախաձեռնութիւններն ու բողոքները խուլ ականջներու պիտի գարնուին: Նոյնպէս մեր միացեալ բոլոր ջանքերն ու գոհողութիւնները յաճախ ձախողութեան պիտի մատնուին եւ մինչ-իսկ շատ մը պարագաներուն՝ մեր ազգային բարոյականը պիտի վտանգուի հայ ժողովուրդի մեծ վրէժին ու վէրքին անձանօթ դիւանագէտներու թրքանպաստ արտայայտութիւններէն:

Հոս է, որ մեր ամբողջ հասար

կով պիտի ծառանանք ու խտացնենք մեր ուժերը, որ թշնամին ներգգայ, որ այս ջարդուած ժողովուրդը երբեք պիտի չլռէ, մինչեւ որ ջարդարարը ճանչնայ ցեղասպանութեան իր անբաւելի յանցանքը եւ՝ ընդառաջէ արդարօրէն մեր բաղձանքներուն ու պահանջներուն:

Կարմիր վարդանին եւ իր արիասիրտ սերունդին, նա- Սարգարապատի նման հերոսներուն յաղթական դիմադրութիւնը անցաւ այս ճգնաժամային դժուարութիւններէ: Այս գոյգ պարագաներուն ալ ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐ շահուեցան հաւատքի եւ յոյսի անյուսահատ մաքառումներով:

Դժբախտաբար՝ այս մեր օրերուն՝ զգալիօրէն կը նուազի թիւը որակաւոր հայերու: Հանրային կեանքի ոգեւորութիւններուն մէջ կ'երեւան շատ անգամ այնպիսի բարոյականով հայեր, որոնք՝ իրենց ծառայութիւններուն եւ բարեգործութիւններուն տուած են առեւտրական բնույթ:

Երբ եկեղեցիի մը կամ կազմակերպութեան մը գումար մը կու տան, փոխադարձ բան մը կ'ակնկալեն: Հոն՝ ուր իրենց ներկայութիւնը զգալի պիտի ըլլայ եւ գովեստով պիտի յիշատակուի իրենց անունը, կու գան մեծ հաճոյքով:

Բայց այս նոյն հայերը, որոնք դանդաղաբար կը դառնան ու մերթ անշարժ, երբ ազգային կարեւոր ձեռնարկի մը տոմս կը դրկուի եւ կը թողուն անպատասխան:

Զօրաւորի մը քով կանգնելով՝ դուն չես գորանար: Հարուստի մը բաճկոնին քսելով, դուն չես հարստանար, երեւելի մարդու մը հետ լուսանկարուելով՝ երեւելի չես դառնար եւ ոչ ալ մարդիկ փաղաքշելով՝ կրնաս հաճել ըլլալ:

Այս փառասիրական շփումնե-

րը շատ դիւրին են, մեծ ճկունութիւն չի պահանջեր քեզմէ: Բայց թիզ մը չես բարձրանար հասակով եւ ոչ ալ վարկով: Կը մնաս այնպէս, ինչպէս որ էիր: Փառասիրութիւնը քեզ վեր չի բռներ, որքան ալ պալոնի պէս փչուիս: Ընդհակառակը, աստիճանաբար կը բերէ քեզ վար ու կը նետէ քեզ երկրէն ալ ցած տեղ մը:

Կրնա՞ս խոնարհութեան մէջ հերոսանալ եւ հոգիդ շնորհագորդել արժանիքներով: Հոն պիտի երեւայ մեծութիւնդ, այդ առաքինութեամբ դուն մեծ պիտի կոչուիս եւ այդ բարեմասնութեամբ հայութեան մէջ տեղ պիտի տրուի քեզի, որ ճառագայթես ազգային իտէալներով ու արժանիքներով:

Հայ ժողովուրդը իր պատմութեան ամենամութ պահերուն փայլեցուց հայրենի երկնակամարին վրայ բիւրեղացած բարոյականով իմացական մեծութիւններ, որոնք շխտակ ու լուսաւոր առաջնորդութիւն տուին իր տարաբախտ ճակատագրին:

Եւ հիմա՞ անոնց արժանաւոր շառաւիղներն են, որ պայքարով հարուստ հոգիով՝ դարձած են մերօրեայ մտատիպար հերոսները ազգային սրբութիւններու եւ ժառանգութիւններու պաշտպանութեան:

Ամէն ճշմարիտ հայ, աշխարհի ո՞ր անկիւնն ալ գտնուի՝ պարտաւոր է գինուորագրուիլ այս հոգեւոր բանակին, որ կը ներկայացնէ հայութեան միացեալ կամքը ազգային իրաւունքներու հետապնդումին ճամբան վրայ:

Թշնամին ակնդէտ կը նայի սփիւռքահայութեան մեծ ու անսպառ ուժին եւ կը դողայ անկէ:

Կը մնայ, որ ամէն հայ պայծառ գիտակցութեամբ տեսնէ այս համազգայնութային ուժին տարողութիւնը եւ լծուի պայքարի:

**ԲԱՑՈՒԱԾ Է**  
 Հիպնոսաբուժութեան կեդրոն  
 ղեկավարութեամբ՝  
**Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի**  
 Փաստիմայի մէջ  
 Ամէն օր՝  
 առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00  
 Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
 Pasadena CA 91104  
 Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**  
 ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
 1060 N. ALLEN AVE. PASADENA  
 ՀԵՌԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680

**Պատրաստե՛ք ձեր ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ Պայուսակը Այսօր**

**Build Your EMERGENCY Kit Today!**

10 իրերը, որոնք կ'օգնեն քո ընտանիքին յարջահարելու արտակարգ իրավիճակը

1. Ցուր
2. Արմուկ
3. Կախարչական կարգապահ
4. Կապույտ
5. Երեւոյթիչ
6. Արտակարգ օգնություն
7. Գործարկ
8. Բաժիկ
9. Կրկն օգնություն
10. Պրոպան

Պայուսակ ստեղծելու և կոնքրետ համար այցելել [L.A.B.T.org](http://L.A.B.T.org) կամ զանգահարել 1-800-868-6228

**Just Be Ready. Prepare Together.**

**ՀԱՏԱՍԵՐԻ ՄԱՍԻՍԻՆՏԵՐԵՆԻ**

Public Health

This publication was supported by Grant/Cooperative Agreement Number 5U49CE00186-04 from CDC. Its contents are solely the responsibility of the authors and do not necessarily represent the official views of CDC.



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՏԱՐԵՎԵՐՋԵԱՆ ՂՕՂԱՆՋՆԵՐ

Լուս Անճելլուսի հայ համայնքում, հայկական դպրոցների շարքում իր ուրույն տեղն ունի «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցը, որն արդեն գործում է տասներկու տարի: Դպրոցը որդեգրել է վաղ տարիքում ուսուցման ծրագիր՝ մանկապարտեզից մինչև երկրորդ դասարան՝ չորս տարուայ ուսուցման ծրագիր, որն իրականացում է մեծ յաջողություններով:

Տասներկու տարի շարունակ դողանջել է դպրոցի գանգը՝ իր գիրկը կանչելով նորերին եւ ճանապարհելով աւարտական դասարանի աշակերտներին՝ երկրորդ դասարանցիներին, որոնք ամէն տարի Յունիսի վերջին տարեվերջեան զանգի դողանջների ներքոյ հրաժեշտի իրենց սրտաբուխ խօսքն են յղում դպրոցին, ուսուցիչներին, ընկերներին:

Այս տարի եւս Յունիսեան տօն էր ու ցնծութիւն «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցի աշակերտութեան համար, յատկապէս շրջ դասարանների աշակերտների ներկայացրած գեղեցիկ պարերի շարքով:

Յունիսի 21-ին, առաւօտեան, կրկին «Արբատ» սրահում կայացաւ դպրոցի տարեվերջեան աւարտական համերգը երկու բաժնով՝ բոլոր դասարաններում սովորող աշակերտների մասնակցութեամբ:

Տարեվերջեան հանդիսութեանը ներկայ էին Հիւսիսային Ամերիկեան Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանը, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու հովիւ՝ Տ. Մանուկ Աւ. Քհնյ. Մարգարեանը, Տ. Դաւիթ Քահանան եւ ծնողները:

Հանդիսութեան բացման խօսքից յետոյ ելոյթ ունեցան դպրոցի ամենակրտսերները, որոնք այն սկսեցին Ա.Մ.Ն.Ի եւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգերով: Փոքրիկներից յետոյ ելոյթ ունեցան 7 դասարանցիները, որոնք իրենց երախտիքի խօսքը յղեցին առ Մեծն Մաշտոց: Նրանք ուրախ էին ու հպարտ, որ արդէն գրաճանաչ են,



ցիներին, որոնք հրաժեշտ պիտի տային դպրոցին. նրանք ուրախ էին, որ պիտի մտնեն մէկ այլ շրջապատ, ուրիշ աշխարհ եւ մի փոքր տխուր ու յուզուած, որովհետեւ թողնելու են դպրոցի ջերմ ու սրտամօտ, հոգեհարազատ մթնոլորտը, որտեղ նրանց մեծ մասը ոտք է դրել չորս տարեկանից եւ անցկացրել ուրախ եւ երջանիկ մանկութեան տարիներ, եւ որտեղ դրուել է նրանց գիտելիքների ամրոք ու կայուն հիմնաքարը յետագայ ուսումնառութեան: Նրանք կը գնան՝ ետեւում թողնելով մանկութեան մի անհոգ շրջան, արդէն սիրելի ու հարազատ դարձած դէմքեր եւ իրենց հետ կը տանեն այն ամէն լաւն ու բարին, որ սերմանուել է նրանց մատող հոգիներում:

Յունիսի 20-ին, երեկոյեան «Արբատ» սրահի դահլիճում կայացաւ 2007/2008 ուսումնական տարուայ ընթացքում գերազանց առաջադիմութիւն եւ օրինակելի վարք ցուցաբերած աշակերտներին գովասանագրերով, պատուոգրերով, կրծքանշաններով պարգևատրելու հանդիսաւոր արարողութիւնը: Հանդիսաւոր երեկոն աւելի խանդավառուեց դպրոցի բոլոր դասարանների աշակերտների մայրերի ու հայ երգի անուշ ելեւէջները:

կարող են մեր ոսկեղնիկ մայրերի ու հայ երգի անուշ ելեւէջները: Օրուայ հանդիսութիւնը եզրափակեց Սրբազան Հայրը՝ բարձր գնահատելով աշակերտների ամուսնիքը, երգը, նշելով թէ որքան արտայայտիչ էր եւ որքան յոյզ ու հոգի կար այդ ամենում:

Մտողներին եւ հիւրերին նրանք ներկայացրին գեղարուեստական գեղեցիկ ծրագիր, որ ընդգրկուած էին Պ. Սեւակի, Գ. Էմինի, Վ. Դաւթեանի, Համօ Սահեանի մի շարք բանաստեղծութիւններ: Գրեթէ մէկ ժամ շարունակ սրահում թեւածում էին մայրերի լեզուի քաղցրալու հնչիւններն ու հայ երգի անուշ ելեւէջները:

Օրուայ հանդիսութիւնը եզրափակեց Սրբազան Հայրը՝ բարձր գնահատելով աշակերտների ամուսնիքը, երգը, նշելով թէ որքան արտայայտիչ էր եւ որքան յոյզ ու հոգի կար այդ ամենում:

Սրբազան հայրը շնորհաւորեց

դպրոցի տնօրէնուհուն, ուսուցչական կազմին, ծնողներին՝ ցանկանալով ու մաղթելով առողջութիւն, կամք ու կորով մատող սերնդի ուսուցման ու դաստիարակութեան վեհ գործում:

Կիրակի օրը, Յունիսի 22-ին Ս. Յովհաննէս Կարապետ եկեղեցում տեղի ունեցաւ աւարտական դասարանների վկայականների բաշխման հանդիսաւոր արարողութիւնը: Այն բացուեց «Հայր Մեր» Տէրունական աղօթքի երգեցողութեամբ, որից յետոյ աշակերտներն ամունքեցին՝ ներկայացնելով Գ. Էմինի «Մեր Այբուբենը» եւ Ժ. Կարապետեանի «Հայերէնը» բանաստեղծութիւնները:

Վկայականների բաշխման արարողութիւնից յետոյ երկրորդ դասարանի լաւագոյն աշակերտները պարգևատրուեցին ոսկէ եւ արծա-

թէ կրծքանշաններով, պատուոգրերով: Միայն մէկ աշակերտ արժանացաւ տնօրէնի կողմից տրուող յատուկ մրցանակին:

Դպրոցի տնօրէնուհին շնորհաւորելով աւարտական դասարանցիներին՝ ցանկացաւ նրանց բազում յաջողութիւններ, ապա բաշխեց նուէրներ՝ որպէս յուշ սիրելի ու հարազատ դպրոցից:

Հանդիսաւոր արարողութեան վերջում Տ. Մանուկ Աւ. Քհնյ. Մարգարեանը նոյնպէս շնորհաւորեց աշակերտներին, ծնողներին, ցանկացաւ դպրոցին յարատեւութիւն, նորանոր յաջողութիւններ ու նուաճումներ: Վկայականների բաշխման արարողութիւնն աւարտուեց օրհնութեան խօսքով, աղօթքով, որից յետոյ աշակերտներն ստացան Սուրբ Հայրորդութիւն:

Advertisement for Tiramisu Music & Entertainment featuring a cartoon character and event details for August 24, 2008.

Advertisement for PACC (Pasadena Access Community Corp.) channel 56, providing broadcast times and contact information.



# ԱՐՈՒԵՍ

## ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՐԵԱԿ (TRIO)

### ԱՍՏՏՈՒՐ ԿԻՒՋԷԼԵԱՆ

Հիմնուած 1999 թուականին՝ «Արիսքա»-ն 2008-ին վերանուցաւ Արամ Խաչատուրեան Երեակ (Aram Khachaturian Trio): Միջազգային երաժշտական շրջանակներու մէջ յարգանք վայելող այս խումբը, նուագահանդէսներով շրջագայած է շատ մը երկիրներ, որոնց կարգին՝ Հայաստան, Ռուսաստան, Զուիցերիա, Կեդրոնական եւ Հարավային Ամերիկա: Ցատուկ յիշատակութեան արժանի է այն պարագան, որ 2007 թ. Նոյեմբերին Երեակի Մոսկուայի եւ Ռուսաստանի այլ քաղաքներուն մէջ տուած նուագահանդէսներն արձանագրած են մեծ յաջողութիւն:

Արիսքա Երեակի ելոյթները յաճախ ցուցադրուած են հեռուստատեսութեամբ եւ ձայնասփռուած՝



ուստի ոչ ոք, երաժշտական վայելք պատճառելով բազմահազար ունկնդիրներու: Քննադատները բարձր գնահատած են Երեակի կատարողական վարպետութիւնը, նրբազգացողութիւնը, հնչիւններու ջերմութիւնն ու երանգը, ինչպէս նաեւ հրաշալի երաժշտականութիւնը:

Անցնող երկու տարիներու ընթացքին նուագախումբին անդամները վարպետութեան դասեր (master classes) տուած են Հայաստանի զանազան շրջաններու երաժշտական դպրոցներու ուսանողներէն:

Երեակը սերտօրէն համագործակցած է ժամանակակից շարք մը կոմպոզիտորներու հետ եւ յատկապէս Արիսքայի ապսպրանքով անոնց գրած ստեղծագործութիւններուն անդամակի կատարողը (premier) հանդիսացած է:

Ընդգծումի արժանի է այն իրողութիւնը, որ Արամ Խաչատուրեան Երեակի անդամները, Արմինէ Գրիգորեան, Կարէն Շահգալթեան եւ Կարէն Քոչարեան կը նկատուին սենեկային երաժշտութեան մեծ վարպետներ:

Ի դէպ է նշել նաեւ որ Երեակի նուագացանկը հարուստ է ոչ միայն հեղինակներու քանակով, այլ նաեւ երաժշտական ոճերու այլազանութեամբ: Անոր նուագացանկին մէջ ներառուած են շուրջ յիսուն դասական եւ ժամանակակից կոմպոզիտորներու ստեղծագործութիւնները: Այս առիթով գնահատանքի մեր

խօսքը հենք կրնար չհիասոսկազրել պրն. Վահէ Յակոբեանին, որուն նիւթական օժանդակութեան շնորհիւ Երեակը բազմաթիւ նուագահանդէսներ եւ երաժշտական վարպետութեան դասեր կրցաւ տալ Կիւմրիի, Էջմիածնի, Աբովեանի, Գորիսի, Սիսեանի, Քաջարանի, Արմաւիրի եւ Հայաստանի այլ քաղաքներուն մէջ, 2006-2008 տարիներուն:

Ծանօթանանք Արամ Խաչատուրեանի Երեակի անդամներուն:

### ԱՐՄԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ (ԴԱՇՆԱՄՈՒՐ)

Աւարտելով Երեւանի Չայքովսքիի եւ Կոմիտասի անուան երաժշտանոցները՝ Արմինէն իր յետաւարտական մասնագիտութիւնը ըրած է Գ. եւ Ս. Սարջեաններու

### ԿԱՐԷՆ ՇԱՀԳԱԼԴԵԱՆ (ՋՈՒԹԱԿ)

Կարէն աւարտած է Մոսկուայի Երաժշտանոցը (Prof. Victor Tretyakov-ի դասարան): Յետաւարտական Մասնագիտութիւնը ստացած է Prof. Maya Glezarova-ի հսկողութեան տակ: Ան հետեւած է Y. Menuhin-ի, V. Spivakov-ի, G. Zhislin-ի եւ Y. Chugayeva-ի վարպետութեան դասերուն (master classes): 1998-2002 տարիներուն նուագած է Սփիւվաքովի համբաւաւոր "Moscow Virtuosi"-ի հետ: 2003-2005-ին, որպէս մենակատար, ելոյթ ունեցած է զանազան նուագախումբերու հետ, նուագելով Stradivarius ջութակի վրայ, զոր ժամանակաւորապէս իրեն տրամադրած է Ռուսաստանի Մշակույթի նախարարութիւնը: Կարէն Pablo Sarasate (Սպանիա) Միջազգային Մրցոյթի դափնեկիրն է: Ան կրթութիւնը կրած է Դաւիթ Օյսթրախ, Եուրի Եանքելեվիչ եւ Միստիսլավ Ռոսթրափովիչ հիմնադրամներու: Կարէն մենահամերգներով հանդէս եկած է Միացեալ Նահանգներու, Շուեդի, Հարավային Քորիայի, Հայաստանի եւ Ռուսաստանի մէջ:

### ԿԱՐԷՆ ՔՈՉԱՐԵԱՆ (ԹԱԻՋՈՒԹԱԿ)

Կարէն աւարտած է Երեւանի Չայքովսքիի անուան երաժշտանոցը (Փորֆ. Ա. Չաւուշեանի դասարան) եւ Կոմիտասի անուան երաժշտանոցը (Փորֆ. Գ. Թալալեանի դասարան): Ան հիմնադիրն է եւ առաջին մենակատարը՝ Հայկական Սենեկային Նուագողներու (Armenian Chamber Players ACP), Associate Concertmaster՝ Հայաստանի Ֆիլհարմոնիկ Նուագախումբին եւ Արիսքա Երեակի հիմնադիր անդամներէն մին: Հայկական Սենեկային Նուագողներու եւ Հայաստանի Ֆիլհարմոնիկ Նուագախումբին հետ Քոչարեան շրջած է ամբողջ Եւրոպան, յաճախ ելոյթ ունենալով որպէս մենակատար: 2005-ին, երբ է. Թովիշեան ղեկավարեց Փասսաթինա Սինֆոնիկ Նուագախումբը՝ Կարէն Քոչարեան հանդէս եկաւ որպէս մենակատար: Դաշնակահարուհի Արմինէ Գրիգորեան, ջութակահար Սուրէն Հարնազարեան եւ Կարէն Քոչարեան դասեր տուած են Հայաստանի զանազան մարզերուն մէջ: Կարէն Քոչարեան է նաեւ Արամ Խաչատուրեանի Լարային Քառեակի թաւջութակահարը:

Հայաստանին եւ հայ ժողովուրդին պատիւ բերող Արամ Խաչատուրեան Երեակին եւ անոր տաղանդաւոր անդամներուն կը մաղթենք նորանոր յաջողութիւններ: Սփիւռքահայ համայնքներուն կը մնայ հրաւիրել հրաշալի այս Երեակը եւ վայելել անոր հիասքանչ կատարումները:

Blue Cross of California takes the worry out of health care. Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

## HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent

1807 W GLENOAKS BLVD. #202

GLENDAL, CA 91201

(818) 502-3233

HARUT@EXCELHYE.COM

WWW.EXCELHYE.COM

CA Insurance

License #0B28270



The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

**Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**  
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**  
**massis2@earthlink.net**



ՅՈՒՇԵՐ

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»-Ի ՇԱՐՔԻՑ ՆՈՐԻՑ ԳԱՂԹԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի. ՔՀՆՅ.Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱՆԱՅԵԱՆ

1930 թվականին էր: Ամբողջ սեփական խանութները եւ տները պետականացրել էին: Ոչ ոք իրաւունք չուներ սեփական գործով զբաղուելու: Հայաստանի նորաստեղծ պետութիւնը դեռ չէր կարողացել բուժել անցեալից մնացած բազմաթիւ խոցերը, եւ հարթել բոլոր դժուարութիւնները: Մի տեսակ անորոշութիւն էր նկատուում: Որոշ մարդիկ ձեռքբերւած անապատային մեղադրանքներով: Անհանգիստ էի, ու չէի կարողանում որոշել թէ ի՞նչ անեմ: Կնոջս հետ խորհրդակցելուց յետոյ, որոշեցի անցնել Պարսկաստան, «նոր բախտ» որոնելու յոյսով: Ազգականներս ու բարեկամներս հետ մնաք բարով անելու համար, մեկնեցի Աւշար: Մի քանի օր յետոյ եկաւ կինս, իր հետ բերելով երեխաներս: Վերջին անգամ համբուրելով զաւակներս, 1930 թվականի Օգոստոս 18-ին թողեցի Աւշար գիւղը, եւ ճամբայ ընկալի դէպի Պարսկաստան: Ինձ հետ էին նաեւ մի խումբ «դժգոհներ», (հիմակուայ առումով «այլախոհներ»), թուով 35 հոգի: Սահմանը պիտի անցնէինք ապօրինի կերպով: Լուսինը նոր էր բարձրացել Նախիջեւանի լեռան կատարից, որ աղօտ լոյսի ներքոյ, ջրուած ցորենի եւ բամբակի արտերի միջով, հետիոտն հասանք Արաքս գետի ափին: Գետի ջուրը քիչ էր:

Բոլորս յուզուած էինք. փոթորկուած էր մեր ներաշխարհը, որովհետեւ հեռանում էինք մեր սեփական հողից, ջրից եւ հարազատներից, դառնալով նորից պանդուխտ ու թափառական: Մեր խմբից մի քանի տղաներ դեռեւս գետը չէին անցել, երբ իրանական սահմանապահ ժանդարմները երեւացին գետի ձախ ափին:

Մենք թագնուեցինք ափի եղէգների արանքում: Այդպիսով վտանգն անցաւ. մեզ չնկատեցին: Եղէգների միջով անցնելը թէ դժուար էր եւ թէ վտանգաւոր, որովհետեւ վայրի խողեր կային եղէգնուտի մէջ:

Արեւածագին սահմանն անցել էինք արդէն: Մի աղբիւրի մօտ նստեցինք նախաճաշի: Օգոստոսեան այրող արեւի ճառագայթների ներքոյ, մեր չաւէտ պաշտելի գոյգ Մասիսներին յառած մեր աչքերը, սկսեցինք վեր բարձրանալ: Լեռների լանջերին տեղ-տեղ երեւում էին ցարական Ռուսաստանի նախկին

պահականոցները, որոնք ծածկուել էին խոտերով:

Արեւը գնալով աւելի էր այրում ու դժուարացնում մեր վերելքը: Թունաւոր օձերը վիտում էին չորս կողմ: Ծարաւից պապակոււմ էինք: Գնալով ուժասպառ էինք լինում: Մի պահ նստում էինք շունչ առնելու համար, ապա նորից շարունակում մեր տաժանալից ճանապարհը: Այդ պահին լսեցինք օդանաւի ձայներ: Պարզուեց որ թրքական ձ օդանաւեր գնում էին ու մարտկոծելու Արարատի շրջանի քուրդ ապստամբների դիրքերը: Մենք իսկույն թագնուեցինք քարերի ու մացառների արանքներում:

Օդանաւերը հեռացան, մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Մասիսի ծարաւից մեր տղաներից մի քանիսը ուշաթափ եղան: Ումանք էլ իրենց բեռները աւելի դիմացկուն ընկերների յանձնեցին: Հասանք ուսական նախկին մի պահականոցի: Յոյս ունէինք որ ջուր պիտի գտնենք: Աւաղ, աղբիւրը չորացել էր: Բոլորս յուսահատ ու յոգնած նստեցինք, փրկութեան ոչ մի յոյս չկար այլեւս, մեզ պիտի յանձնէինք անորոշ Տակաւորներին: Յանկարծ փոքր Մասիսի կողմից մի ձիաւոր յայտնուեց, ու մեզ տեսնելով կանգ առաւ: Պատերազմական վիճակ էր: Ձիաւորը ուզեց ետ դառնալ, սակայն մեր ընկերներից շատախեցի Շահէնը որ քրդերէն գիտէր, բացատրեց նրան, որ մենք բարեկամ մարդիկ ենք, ուզում ենք անցնել Պարսկաստան եւ խնդրեց որ օգնութիւն տան մեզ, այլապէս բոլորս էլ ծարաւից պիտի մեռնենք:

Այդ օրերին քիւրդ եօթը ցեղախմբեր մահու եւ կենաց պայքար էին մղում տաճիկների դէմ. այդ պատճառով, քիւրդերը մի քիչ բարեկամացել էին հայերի հետ: Մի քանի շաբաթ առաջ քրդերը անակնկալ յարձակուել էին սահմանում գտնուող մէկ հարիւրակ թուրք գիւնուորների վրայ, որոնք սարսափահար Արաքսն անցնելով, ապաւինել էին Ղամարու գիւղի հայ բնակիչներին: Քիւրդերը գրաւել էին թրքական պահականոցը, ու տարել այնտեղ եղած գէջները: Ապստամբ քիւրդերը իշխում էին Արարատին: Քիւրդ ձիաւորը յուսադրեց մեզ ու հեռացաւ: Մէկ ժամ յետոյ էլով, որն բեռնաւորուած էր ջրի եւ թանի կժերով, վերադարձաւ: Ազատեցին սկսեցինք խմել: Երէկուայ մեր թշնամի քիւրդը, այսօր «բարեկամացել»

էր մեզ հետ: Արեւի վերջին ճառագայթները դեռ փայլում էին Արարատի ձիւնածածկ կատարին, երբ մենք յոգնած ու նուաղած հասանք երկու Մասիսների արանքում գտնուող քրդական վրաններին, որտեղ կրկին ջուր ու թան խմելուց յետոյ, նեղ կածաններով սկսեցինք վերելքի մեր ճամբան: Ջոյգ Մասիսների կենտրոնում հաստատուած էր Մուկուրցի քիւրդ ցեղապետը, իր գինուած մարդկանցով: Կանաչք էլ գինուած էին: Այդ շրջանում քրդերին յաջողուել էր հրացանի շէշտակի հարուածն երով տապալել թրքական մէկ օդանաւ, որի ջարդուած մասերը ընկած էին այս ու այն կողմ: Քիւրդերը այդտեղ եւս մեզ ընդունեցին գրկաբաց եւ եղբայրական սիրով: Մեզ հիւրասիրեցին առատ կաթով եւ մածուկով: Հացը պակաս էր: Փոքր Մասիսի լանջին բազմաթիւ ծառերի վրայ փորած բուներ էին տեսնուում: Մեր հարցին թէ սրանք ի՞նչ են. 100-ամեայ մի ծերունի քիւրդ շէշտապատասխանեց, որ մեր մեծերից լսել ենք, որ դարեր առաջ այստեղ արհեստական անտառ է եղել, որը պատկանելիս է եղել հայոց թագաւորներին: Այստեղ է բանտարկուել նաեւ հայ թագաւորներից մէկը: Ջարդուած մէկ խաչքար եւս կար այնտեղ, որի վրայ հագիււ նշմարելի էին հայերէն տառեր: Այդպիսով պարզուեց թէ այդ վայրը ժամանակին ծառայել է նաեւ որպէս գերեզմանոց: Մի խոր

ձորի մէջ, մի անցք տեսանք, որն եղել էր հայ գինուորների ստորերկրեայ ճանապարհ: Օգոստոս 21-ին, կտրելով դժուարանցելի գիլգակ ճանապարհը, փոքր Մասիսի գլուխը հասանք: Այդտեղ գանազան փոսերի հանդիպեցինք, որ յետոյ տեղեկացանք հայոց թագաւորի պաշտպանողական բերդերն են եղել:

Յաջորդ օրը վայր իջանք ու այցելեցինք Ս. Յակոբի անունով կառուցուած, կիսաւեր վանքը, որն գտնուում էր Մեծ Մասիսի լանջին: Խորին երկիւղածութեամբ աղօթեցինք վանքում, որի մաշուած քարերը փոռած էին դէս ու դէն ցրուած քարերի միջից բխում էր սառնորակ աղբիւրի ջուրը: Չոքեցինք. աղօթեցինք, ուր եւ մեր հոգու աչքերի առջեւ երեւաց Ս. Յակոբ Հայրապետը, որն նոյն վայրում աղօթել եւ խնդրել էր ամենակարողից, տեսնելու Նոյեան տապանը: Աւանդութիւնը ասում է որ Տէրը լսելով Ս. Յակոբի խնդրանքը, այդ չոր ու խանձուած դաշտում աղբիւր է հօսեցնում եւ երկնային հրեշտակները մի կտոր փայտ են բերում Նոյեան տապանից:

Ս. Յակոբ Հայրապետը այդ վայրում կառուցում է իր անունով մի վանք: Այդ վանքից քիչ հեռու Ախուրիկ (Ախուրի կործանուել է 1840 թվական, երկրաշարժից: Ախուրի գիւղն էր, աւեր վիճակում, որն ըստ Աստուածաշունչի, Նոյ Նահապետը իր տապանից դուրս գալուց յետոյ, այդտեղ ուռի է տնկել:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS

ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS.

authentic cuisine  
full hookah bar  
VIP membership  
full cocktail bar  
live belly dancing  
live music and DJ

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB  
626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107



### ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ

Շարունակում է 6-էն

Հայերի Ցեղասպանությունը արդեն ընդունած պետություններին:

Հայերս հասկանում ենք, որ երկու դատապարտուած հարեւանները (հայերը եւ թուրքերը) չեն կարող յաւիտեան թշնամի մնալ, մանաւանդ քաղաքակրթութեան ընթացող զարգացման մեր դարաշրջանում, երբ բոլոր ջանքերն ուղղուած են աշխարհում խաղաղութիւններ կաշուն դարձնելու ու մարդկութեան հետու պահելու համար կործանարար պատերազմներից: Հայաստանի եւ թուրքիայի յարաբերութեան բարելաւումը նաեւ բխում է երկու ժողովուրդների շահերից եւ հայերը մեծ սիրով են արձագանքում համագործակցութեան մի պայմանով, որ ձեւաւորուելիք յանձնախումբն անվերապահօրէն ընդունի Հայերի Ցեղասպանութեան փաստը, առանց այդ փաստը նորից ուսումնասիրութեան նիւթ դարձնելու՝ փաստելու համար արդէն փաստուածը: Եթէ այդպէս չլինի, կը նշանակի որ Հայաստանի նախագահը կ'սկսածի տակ է աւելում ընդունուած փաստը, իսկ սփիւռքի լոբբիստների ամբողջ ջանքերը Չուրը կ'ընկնեն, որովհետեւ միջազգային հանրութիւններ շատ պարզ հարց կը տայ հայերին. «Եթէ Հայերի Ցեղասպանութեան հարցը փաստուած չէ եւ նոր է ուսումնասիրուելու փաստելու համար, որին նոյնիսկ կասկածում է Հայաստանի նախագահը, մենք ինչու՞ համար պիտի ընդունենք այն...» ստեղծելով խառնաշփոթութիւն միջազգային ասպարէզում: Այլ է հարցը, եթէ ձեւաւորուած յանձնախումբը ուսումնասիրի Ցեղասպանութեան հետ կապուած մնացած հարցերը՝ հողային, ունեցուածքի, մշակութային յուշարձանների եւ այլն: Երկու երկրներն էլ բազմաթիւ խնդիրներ ունեն ներկայացնելու ձեւաւորուելիք յանձնախումբի քննարկմանը:

Նշենք նաեւ, որ անձնական շփումները միշտ էլ համագործակցութեան աւելի լաւ արդիւնքներ են տալիս, եւ հայերս զգացմունքային մօտեցում չպետք է ցուցաբերենք Հայաստանի եւ թուրքիայի նախագահների՝ Սերժ Սարգսյանի եւ Աբդուլլահ Գիւլի, երկու երկրների ֆուտբոլի հաւաքականների հանդիպումը Երեւանում Սեպտեմբերի 6-ին միասին դիտելու հան-

դէպ:

Մի լուսաբանութիւնն եւս: Հայերի Ցեղասպանութեան հարցում թուրքիան շարունակում է ատելութիւն սերմանել թուրք նոր սերնդի մեջ, նրա ուղեղը լուսնալով դպրոցական դասագրքերում յատուկ տեղ գտած կեղծ պատմագրութեամբ, որ հայերն են կոտորել թուրքերին եւ այդ առթիւ էլ յուշարձաններ կանգնեցնել, ցոյց տալով այդ կեղծիքի «իսկութիւններ»: Յամենայն դեպս հայերը այդպիսի մոլեռանդ (ֆանատիկական) ատելութիւնն չունեն թուրքերի նկատմամբ: Վերջին ժամանակներս արտաքին ճնշումների տակ թուրք-իայի որոշ չափով մեղմացած քաղաքականութիւնը խօսքի ազատութեան հարցում՝ քրէական օրենսգրքի 301 յօդուածը բարեփոխելու հետեւանքով, ի յայտ է բերում բազմաթիւ քաղաքացիների համարձակութիւններ խոստովանելու, որ նրանց ծնողները կամ պապերը, կամ տատերը հայեր են եղել եւ փնտուռ մ են արմատները եւ այդ առթիւ հարցերի շարան տեղացնում պետութեանը՝ իրենց նախնիների անհետացման պատճառների մասին, եւ մինչեւ օրս այդ հարցի վրայ տաքուղներու թուրքիայի քաղաքականութեանը...:

Եթէ յանձնախումբը ձեւաւորուելիք, ակնյայտ է, որ նա շատ դժուարին խնդիրներ պիտի ունենայ իր առջեւ լուծելու, որոնցից մի քանիսը նոյնիսկ անլուծելի են թուում. թուրքիան Հայաստանին անընդհատ առաջարկում է Հայաստանի սահմանադրութիւնն ից հանել թուրքիայի նկատմամբ եղած հողային պահանջները, ինչպէս նաեւ Ատրպէյճանի եւ Նախիջևանի միջեւ եղած միջանցքի բացումը: Առաջին պահանջով նա ուզում է ընդմիշտ թաղել այն իրողութիւնը, որ կոտորելով 1,5 միլիոն հայերի եւ ստուար մի հատուածին էլ սփիւռք դարձնելով, իւրացրել է նրանց բնօրրանը: Արդեօք իրազործելի՞ է Հայաստանին վերադարձնել Արեւելյան Հայաստանը եւ Տրապիզոնը, որպէսզի Հայաստանը ելք ունենայ դէպի Սեւ ծով եւ անհրաժեշտութեան դէպքում արդեօք Հայաստանը կը դնա՞ այդպիսի քայլի...: Բնականօրէն Հայաստանն ունի նաեւ այլ պահանջներ՝ հայկական ճարտարապետական յուշարձանների, այդ թոււմ պղծուած ու քանդուած եկեղեցիների, վանքերի եւ այլ շինութիւնների վերա-

կանգնում ու պահպանում, վնասների հատուցում եւ այլն: Այսօրուայ թուրքիան արդեօք պատրաստ է այդ հարցերի համբերատար քննարկմանն ու լուծում գտնելուն, ընդունելով Հայերի Ցեղասպանութիւններ որպէս փաստուած իրողութիւնն...:

Ինչ վերաբերում է Ատրպէյճանի եւ Նախիջևանի կապին, այն հնարաւոր չէ վերականգնել մինչեւ վերջնականապէս չլուծուի Արցախի հարցը:

Սերժ Սարգսյանի յայտարարութիւնը կարող է նաեւ ուրիշ եզրեր ունենալ՝ շեղելու հայ ժողովրդի ուշադրութիւնը Հայաստանի ներքին քաղաքական խնդիրներից, ինչպէս նաեւ հաճոյանալ Ռուսաստանին, որն աշխատում է սերտացնել յարաբերութիւնները թուրք-իայի հետ, եւ այդ պատճառով շահարկել Հայաստանին՝ դիւրացնելու իր քայլերը այդ ուղղութեամբ:

Մի երրորդ հարց եւս: Համոզված ենք, որ թուրքիան առաջարկելով այդ յանձնախումբի ձեւաւորումը, մեր կարծիքով, նպատակ է հետապնդում նրա հիմնական հարցը դարձնել Հայերի Ցեղասպանութեան ուսումնասիրութիւնները, որպէսզի միջազգայնօրէն ստեղծուի այն, մինչեւ փաստը նորից փաստով փաստերով, որը կը տեւի տարիներ, ապարդիւն դարձնելով հայերի նպատակների իրազործումը՝ արդարութեան հասնելը միջազգային հանրութեան համագործակցութեամբ, թուրքիային ստիպելով ընդունել Հայերի Ցեղաս-

պանութեան իրողութիւնը: Հետեւաբար, այդ յանձնախումբի ձեւաւորուելու դէպքում, նրա հայկական կողմը կտրականապէս պետք է հրաժարուի ուսումնասիրել արդէն փաստուած Հայերի Ցեղասպանութեան իրողութիւնը, որը հակառակ դէպքում մեծ դժուարութիւնների առջեւ կը կանգնեցնի նրան:

Ամէն դէպքում դարձեալ նշենք, որ հայերը, որտեղ էլ որ նրանք լինեն, զգացմունքային մօտեցում չպետք է ցուցաբերեն այս հարցում, քանի որ, ինչպէս նշեցինք, մենք յաւիտեանական դատապարտուած հարեւաններ ենք, պետք է գտնենք հաշտութեան եզր, որպէսզի խաղաղ ապրենք, բարելաւենք մեր ժողովրդի բարեկեցութիւնը Հայրենիքում, հզօրացնենք այն, ուստի պաշտպանելով հանդերձ մեր շահերը, պետք է ամէն ջանք ներդնենք Հայաստան-թուրքիա յարաբերութիւնների բարելաւման համար. եթէ հարեւանդ վատ է, կարող ես տունդ ծախել եւ հեռանալ, իսկ հայրենիքը դարբերից եկող իր հայկական աւանդութիւններով, պատմական յուշարձաններով, մշակույթով, Մասիս ու Արարատով, մի խօսքով ամեն Հայկականով ո՞ւմ պիտի թողնես ու հեռանաս...:

Յոյս ունենանք, որ Հայաստանի եւ թուրքիայի ֆուտբոլի հաւաքականների հանդիպումը, անկախ մրցման արդիւնքից, առիթ կը հանդիսանայ հայ-թուրք մերձեցման սկիզբը դնելու եւ այն զարգացնելու մինչեւ բարեկամութիւն (°):

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

**Մեծ ժողովրդականութիւն Վայելող Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast**

**Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի Ամբողջ Տարածքին**

**Դուք Կրնաք Դիտել Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ Երաժշտական Հաղորդումներ - Եւ այլն**

**Մանրամասնութիւններու Համար Հեռաձայնել 818.547.9696**

**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ր Ալիքի Վրայ**

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը **Շաբաթը 7 օր անվճար**

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400

**ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէլի 280-րդ կայանից**

\*\*\*\*\*

**The Armenian Teletime Is Back On Channel 18**

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day

**7 Days Per Week, Free**

**No Subscription Fee - Plus 40 Additional Channels**

**For info call The Armenian Channel (818) 982-2400**

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ**

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱՔՐԵՍԵՆՍԱ)

GLOBACAST SATELLITE

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՄԱՐԶԱԿԱՆ

ՓԵՔԻՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ

«Մենք պատրաստ ենք» այս է բովանդակ Չինաստանի յատկապէս՝ Փէքինի օրուան կարգախօսը: Արդարեւ եօթ տարիներու տքնաջան նախապատրաստական աշխատանքներն իրենց լրումին հասան եւ Փէքինը պատրաստ է Ողիմպիական խաղերուն, որոնք պիտի տեւեն Օգոստոսի 8-28: Ասիկա պատմական աննախադէպ միջոցառում մըն է ոչ միայն Չինաստանի, այլեւ բովանդակ ասիական ցամաքամասին համար:



Արդարեւ, չորս տարին անգամ մը նշուող այս խաղերը դարձած են բովանդակ աշխարհի եւ յատկապէս մարզասէր միլիոնաւոր հասարակութեան ուշադրութեան կեդրոնը: Այս առթիւ Փէքինի մէջ կառուցուած են գերադիական յարմարութիւններով օժտուած բազմաթիւ մարզադաշտեր, որոնց մէջ ամենահետաքրքրականը «Թուչոյնի բոյն» է, որ կոչուած է բացման հանդիսութեան վայրը հանդիսանալու: Այս մէկը կը նկատուի արդի ճարտարապետութեան ինքնատիպ յրացքներէն մին:

Ներս ու ազգային ողիմպիական կոմիտէներու նախագահները պիտի բնակին իրենց համար նախատեսուած առանձին յատուկ նստավայրերու մէջ, պաշտօնեաներու կարգավիճակին համաձայն: Արդէն Յուլիսի 27-ին տեղի ունեցաւ Ողիմպիական Աւանի պաշտօնական բացումը: Դ. Գաբրիէլեանի համաձայն Ողիմպիական խաղերուն մասնակցող Հայաստանի առաջին խումբը Փէքին կը մեկնի Յուլիսի 31-ին: Բացման արարողութեան ներկայ պիտի գտնուի նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահը:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ 1099 ՀՈԳԻ, 460 ՄԱՍՆԱԳԻՏ ՄԱՐԶԻԿՆԵՐ

Բացման օրը տողանցքին մասնակցող պատուիրակութեանց մեծագոյնը՝ հիւրընկալ երկիրն է: Արդարեւ չինական մարզական պատուիրակութիւնը կը հաշուէ 1099 հոգի, որոնց 460-ը՝ մասնագիտացած մարզիկներ են, մնացեալները՝ իրաւարներ, մարզիչներ եւ պատասխանատուներ: Չին մարզիկներուն միջին տարիքն է 24: Անոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 28 տարբեր մարզաձևերուն:

Նշենք նաեւ որ բացման հանդիսութեանց ներկայ պիտի գտնուին աշխարհի հինգ ցամաքամասերէն ժամանած նախագահներ եւ բարձրաստիճան հիւրեր: Բացման տպաւորիչ արարողութիւնը պիտի աւարտի 20 վայրկեան տեւող հրավառութեամբ գործածութեան պիտի դրուին 35,000 հրավառ հրթիռներ...

Այս բոլորին մէջ տարօրինակն այն է որ մայրաքաղաք Փէքինի գլխաւոր ճաշարաններուն արգիլուած է շան միս գործածել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ 51 ՀՈԳԻ Փէքինի Ողիմպիականի խաղերուն մասնակցող Հայաստանի պատուիրակութիւնը կը բաղկանայ 51 մարզիկ, մարզիչ, բժիշկ եւ այլ պատասխանատուներէ: Հայաստանի Ողիմպիական խաղերու պատուիրակութեան ղեկավար Դերենիկ Գաբրիէլեանը յայտնեց թէ անոնք պիտի բնակին Փէքինի Ողիմպիական Աւանին մէջ:

Մօտ 200 մասնակից երկիրներու նախագահները, վարչապետ-

ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ողիմպիական խաղերուն մասնակցող Ամերիկայի Միացեալ Նահանգներու պատուիրակութիւնը պիտի բաղկանայ 600 հոգիներէ: Անոնց շուրջ 400-ը մարզիկներ են: Ամերիկացիները պիտի մասնակցին ահռուի 30 մարզաձևերուն: Անոնցմէ շատեր նախկին ախոյեաններ են եւ աշխարհի մրցանիշ հաստատողներ:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 8-28 Փէքինի մէջ կայանալիք Ողիմպիական խաղերու տոմսերը 15-էն մինչեւ 117 տոլարի կը վաճառուին: Իսկ չարաշուքեանց առաջին առնելու համար իւրաքանչիւր անձի միայն 2 տոմս կը վաճառուի: Այս կարգադրութիւնը դժգոհութիւն պատճառած է բազմանդամ ընտանիքներուն:

Քաղաքի ապահովութեան համար զօրաշարժի ենթակուած են 110 հազար ոստիկաններ, անվտանգութեան պաշտօնեաներ եւ հազարաւոր այլ կամաւորներ:

Կենտրոնի մաքրութեան համար Ողիմպիականի օրերուն Փէքինի մէջ պիտի երթեւեկեն օր ընդ մէջ զոյգ եւ անզոյգ թուատախտակներ կրող ինքնաշարժեր:


Չին մարզիկներու պաշտօնական համազգեստին համար ընտրուած են դեղին եւ կարմիր տարագները: Իսկ իրաւարները տարագի գոյնն է սեւ:

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ

Փէքինում կայանալիք 2008թ. ամառային խաղերը 29-րդն են պատմութեան մէջ: Հայ մարզիկները ժամանակակից օլիմպիական խաղերին մասնակցում են 1952թ.-ից՝ 15-րդ խաղերից: Համառօտ ներկայացնում ենք հայ մարզիկների ելույթները օլիմպիական խաղերում:

1952թ. Հելսինկի, Ֆինլանդիա, 2 մարզիկ: Այս խաղերում բաւական յաջող հանդէս եկաւ մարմնամարզիկ Հրանտ Շահինեանը, որը միանգամից մետալի արժանացաւ, որոնցից 2-ը՝ ոսկէ: Շահինեանը նախ ԽՍՀՄ հաւաքականի կազմում դարձաւ օլիմպիական ախոյեան, ապա յաջողութեան հասաւ նաեւ անհատական պայքարում: Հանդէս գալով օղակներում, բազմամարտում, նժոյգում եւ զուգափայտում, Հրանտ Շահինեանը դարձաւ առաջին հայ մարզիկը, որը օլիմպիական խաղերում ոսկու է արժանանում: Ժամանակակից հնգամարտում հանդես եկավ Իգոր Նովիկովը, որը բաւարարուեց 4-րդ հորիզոնականով: 1956թ. Մելբուռն, Աւստրալիա, 3 մարզիկ:

Այստեղ փայլեց Հայաստանի 20-րդ դարի լաւագոյն մարզիկ Ալբերտ Ազարեանը, որը 1 ոսկէ




Ալբերտ Ազարեան

րում: 1972թ. Մյունխեն, Գերմանիա, 6 մարզիկ

Աթլետիկայում հանդէս եկող Ֆարինա Մելնիկը դարձաւ օլիմպիական խաղերում ոսկէ մետալի արժանացած առաջին հայաստանցի մարզուհին: Միւնխենում առաջին անգամ օլիմպիական խաղերին մասնակցեցին նաեւ հայ ֆուտբոլիստները: Արկադի Անդրէասեանը եւ Յովհաննէս Զանազանեանը ԽՍՀՄ հաւաքականի կազմում դարձան բրոնզէ մեդալակիրներ: Սպորտային մարմնամարզութիւնում էդվարդ Միքայէլեանը թիմային պայքարում արծաթէ մեդալ նվաճեց: 1976թ. Մոնրէալ, Քանատա, 4 մարզիկ

78կգ քաշային ծանրամարտիկ Վարդան Միլիտոնեանը դարձաւ օլիմպիական խաղերի փոխախոյեան՝ նուաճելով արծաթէ մետալ: Բունցքամարտիկ Դաւիթ Թորոսեանը 51կգ քաշայինների պայքարում արժանացաւ պրոնզի: 1980թ. Մոսկուա, ԽՍՀՄ, 11 մարզիկ

82.5 կգ քաշային կարգում



Վարդան Միլիտոնեան

Ծանրորդ ետլի վարդանեանը դարձաւ օլիմպիական ախոյեան՝ սահմանելով նաեւ նոր ռեկորդ: Ալբերտ Ազարեանի որդին՝ էդուարդը, սպորտային մարմնամարզութիւնում թիմային պայքարում նուաճեց ոսկի: Զրացատկում Սիլվա էմիլիոնեանը նուաճեց արծաթէ եւ պրոնզէ մետալ: Ֆուտբոլում

ՈՒԵՖԱ-Ի ԱՆՈՅԵԱՆՆԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ «ՓԻՆԻԿ» ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑ

Հայաստանի ախոյեան «Փինիկ»ը դուրս մնաց Ախոյեանների լիգայի որակաւորման առաջին փուլից, Աբովեանի քաղաքային մարզադաշտում 0:2 հաշուով զիջելով կիպրոսական «Անորտոսիին»:

Ֆուտպոլի Հայաստանի առաջնութեան առաջին շրջանից յետաձգուած «Բանանց» - «Միկա» խաղում 1:0 հաշուով յաջողութեան հասան «Միկա»-ի ֆուտպոլիստները: Իսկ «Միկա» - «Փինիկ» հանդիպումը աւարտուեց 1:1 հաշուով: «Միկա»-ն 28 միաւորով մնաց 2-րդ հորիզոնականով, «Փինիկ»ը 25 միաւորով եզրափակեց լաւագոյն եռեակը, «Բանանց»ը 24 միաւորով շարունակում է ընթանալ 4-րդ հորիզոնականով: Այգլիսով Հայաստանի առաջնութեան 1-ին կէսը պաշտօնապէս աւարտուեց եւ յաղթող դարձաւ «Արարատ»ը 29 միաւորով: Հայաստանի առաջնութեան 2-րդ կէսը 15-րդ տուրի հանդիպումներով կը մեկնարկի Օգոստոսի 2-ին:



Վարդան Միկոյան

մետալ նուաճեց անհատական պայքարում օղակների վրայ, եւս մէկ ոսկու արժանացաւ թիմային պայքարում: Ոսկէ մետալի արժանացաւ նաեւ բունցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարեանը, որը հանդէս էր գալիս 63.5 քաշային կարգում: Իգոր Նովիկովը եւս դարձաւ ախոյեան, սակայն թիմային պայքարում:

1960թ. Հռոմ, Իտալիա, 5 մարզիկ

Մարմնամարզիկ Ալբերտ Ազարեանը կրկին դարձաւ ախոյեան, նուաճելով իր 3-րդ ոսկին օլիմպիական խաղերում: Թիմային պայքարում Ազարեանը արծաթի արժանացաւ: Խորհրդային Հայաստանը ներկայացնող Վալենտին Չեռնիկովը այս խաղերում պրոնզի արժանացաւ, իսկ Իգոր Նովիկովը թիմային պայքարում նուաճեց արծաթէ մետալ:

1964թ. Թոքիօ, Ճապոնիա, 1 մարզիկ

Այս խաղերին մասնակցեց միայն Իգոր Նովիկովը: Ժամանակակից հնգամարտում հանդէս եկող այս մարզիկը անհատական պայքարում արծաթէ մետալ նուաճեց, իսկ թիմային պայքարում՝ ոսկէ:

1968թ. Մեխիկօ, Մեքսիկա, 1 մարզիկ

Մեքսիկա մեկնեց միայն ազատ ոճային ըմբիշ Նազար Ալբարյեանը, որը գրաւեց 4-րդ հորիզոնականը 52կգ քաշայինների պայքարում:



### ՓՐԿԵԼ ԶԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՊԱՅՊԱՆԵԼ ԱՐՑԱԽԸ

Շարունակուած էջ 5-էն

գնորի վրայ: Այդ գործողութիւնները հետեւանք կարող է լինել արտագաղթի աճը: Էներգապաշարները՝ նոր գներով գնումը կը ստիպի կառավարութեանը լուրջ վարկեր վերցնել: Հայաստանում գաղի տարեկան պահանջարկը կազմում է 1, 9-2, 2 միլիարդ խորանարդ մետր: Սա նշանակում է, որ այսօր ուսանական «Գազպրոմին» ունեցած 47 միլիոն տոլար պարտքը 1 տարուայ ընթացքում կարող է աւելանալ 400-500 միլիոն տոլարով: Այսպիսով՝ սրութեամբ է դրվում հարցը, թե ինչ կառավարութիւն մենք կ'ունենանք եւ ինչ կերպ կը վճարենք պարտքերը: Նրանք, ովքեր մինչ այսօր կառավարել են երկիրը՝ դիտեն միայն գոյքով վճարել պարտքի դիմաց: Դա վճարման ամենահասարակ եւ դաւաճանական ձեւն է: Դատէք ինքներդ. ԽՍՀՄ-ի լուծարումից յետոյ բոլոր նախկին միութենական հանրապետութիւնները դարձան Ռուսաստանի պարտապանները: Պահանջելով պարտքերի վերադարձ՝ Ռուսաստանը բոլորին առաջարկել է վերադարձի նոյն գծակարգը՝ «գոյք պարտքի դիմաց: Այս առաջարկից հրաժարուել են բոլորը, բացի, ի հարկէ, Հայաստանից, որը ղեկավարում է յանցաւոր կլանը: Լաւագոյն դէպքում՝ այս ղեկավարների «ուղեղը չի գոռել», որպէսզի պարտքը վերակառուցաւորէն, վերցնեն նոր վարկեր, կատարեն պայմանագրային պարտաւորութիւնները, ի վերջոյ՝ անեն այն, ինչ անում են միւսները: Ինչ վերաբերում է այդ ստուգարքի վատթարագոյն սցենարին՝ ենթադրեք ինքներդ: Այսօրուայ կառավարիչները ի՞նչ «արտոնութիւններով» կը մարեն նոր վարկերը: Այդ կարգի պարտքերը ձեռնարկութիւններով փակել հնարաւոր չէ, քանի որ Հայաստանի Հանրապետութեան իրաւասութեան տակ պետական ձեռնարկութիւններ չկան, որոնք համար-

ժէք գին ունենան: Վերջին արժէքաւոր ձեռնարկութիւնը Հրազդանի Զէկ-ի չկառուցուած հինգերորդ բլոկն էր, այն նոյն հողը Զէկ-ի, որով փակեցին անցեալ տարուայ պարտքերը: Եզակի արժէքներ են մնացել հողը, բնական պաշարները, քաղցրահամ ջրի պաշարները: Այսպէս՝ կարող ենք մենք թոյլ տալ, որ իրապէս ազգային հարստութիւնները վատնեն այն մարդիկ, ովքեր կեղծիքներով են իշխանութեան եկել՝ չունենալով գիտելիքներ, չկարողանալով գրագէտ ղեկավարել երկիրը ժամանակակից պայմաններում: Ի՞նչ ենք մենք թողնելու սերունդներին:

#### ՎԵՐՋԱՐԱՆ

Մի՞թէ իրավիճակն այդքան անյուսալի է եւ անշրջելի: Մի՞թէ անցած տասը տարիները մեզ ոչինչ չեն սովորեցրել, եւ մենք հաշտուած ենք յաջորդ տասը տարիներին լինել այսպիսին եւ վախեցած ենք մահակներից ու գնդակներից. արդեօ՞ք լռելեացի կը հետեւենք, թէ ինչպէս կը ծաղրեն մեր հայրենիքը: Ոչ, դա չի լինի: Մեր հայրենիքի ապագայի համար ոտքի են ելել հարիւր հազարաւոր հայեր՝ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Սփիւռքում: Համաժողովրդական այս Շարժումը ունի նաեւ իր առաջնորդը, ով հակադրում է քրէյտին այս իրաւակարգին, առկայ են քաղաքական եւ տնտեսական կոնկրետ մարտահրաւէրներ, մշակուած է գործունէութեան երկարաժամկէտ ծրագիր եւ կասկած չկայ, որ կը յայտնուեն մասնագիտական պատրաստուածութիւն ունեցող անձինք, ովքեր կարող են դիմակայել այդ մարտահրաւէրները: Յանուն այն նուազագոյնը պահպանելու, ինչ մնացել է մեզ պատմական Հայաստանից, յանուն նրա, անհրաժեշտ է, որ մենք միաւորուենք՝ անկախ մեր համակրանքներից եւ նախապատուութիւններից, եւ դառնանք Համաժողովրդական Շարժման մասը, ինչը կարող է փրկել Հայաստանը եւ պահպանել Արցախը:

### ՎԵՐ. ՅՈՎԱՒՓ ՄԱԹՈՍԵԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԱԾ

Շարունակուած էջ 8-էն


թեան հրաւիրեց Հովիւր: Համաժողովի օրակարգի վրայ էր նաեւ Միութեան երկամեայ նորընտիր վարչութեան կազմը՝ հետեւեալ գրեւորով:  
Միութեան նախագահ՝ Վեր. Աւետիս Պոյներեան Watertown, MA  
Միութեան փոխ-նախագահ՝ Տէյվիս Յակոբեան Chicago, IL  
Գանձապահ՝ Զաւէն Խանճեան

Glendale, CA  
Քարտուղարուհի՝ Ռոզմերի Տէմիրճեան Belmont, MA  
Միութեան յաջորդ համաժողովը տեղի պիտի ունենայ Տիթ-րոյթ քաղաքին մէջ 2010 թուականին:  
Միութեան հովիւի գրասենեակը կը գտնուի Կլէնտէյլ քաղաքի մէջ: Հասցէն է՝ 616 N. Glendale Ave., Suite 23, Glendale CA 91201  
Tel. (818) 500-8839

### ԶԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ

Շարունակուած էջ 15-էն

Խորէն Յովհաննիսեանը ԽՍՀՄ հաւաքականի կազմում դարձաւ պրոնգէ մետալակիր: Մականախաղում նման յաջողութեան հասաւ Սօս Հայրապետեանը, իսկ սուսերամարտում՝ Աշոտ Կարապետեանը, որը թիմային



Օգսէն Միրզոյեան

պայքարում բացի պրոնգից նաեւ արծաթի արժանացաւ: 1984թ. Լոս Անճելըս, ԱՄՆ  
ԽՍՀՄ հաւաքականը այս խաղերը բոցկոտեց, չմասնակցելով միացեալ նահանգներում կայացած մրցումներին: Բնականաբար, օլիմպիական խաղերից դուրս մնացին նաեւ հայ մարզիկները: 1988թ. Սեուլ, Կորեա, 8 մարզիկ

56կգ քաշային ծանրորդ Օգսէն Միրզոյեանը դարձաւ օլիմպիական ախոյեան դարձած 2-րդ հայ ծանրորդը: Յունահունական ոճի ըմբիշ Լեւոն Զուլֆալակեանը, որը ներկայումս Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչն է, 68կգ քաշայինների պայքարում նուաճեց ոսկէ մետալ: Ազատ ոճային Ստեփան Սարգսեանը 62կգ քաշայինների պայքարում դարձաւ արծաթէ մեդալակիր: 1992թ. Բարսելոնա, Սպանիա 5 մարզիկ

Փլուզուած ԽՍՀՄ-ի մարզիկները այստեղ հանդէս եկան որպէս ԱՊՀ-ի ներկայացուցիչներ: Հայաստանի մարզիկները պարզապէս փայլեցին այս խաղերում: Ծանրամարտում օլիմպիական ախոյեան դարձաւ Իսրայէլ Միլիտոնեանը: Յունահունական ոճում ախոյեանի կոչման արժանացաւ 74կգ քաշային Մնացական Իսկանդարեանը: Հրաձիգ Հրաչեայ Պետրիկեանը եւս դարձաւ ոսկէ մետալակիր: 3 օլիմպիական ախոյեան մէկ խաղերում. սա բացառիկ արդիւնք էր: Յաւալի է միայն, որ այս մարզիկները հանդէս չէին գալիս արդէն անկախութիւն ձեռք բերած Հայաստանի դրօշի ներքոյ: 1996թ. Ատլանտա, ԱՄՆ, 32 մարզիկ  
Առաջին անգամ հայ մարզիկ-

ները հանդէս էին գալու Հայաստանի դրօշի ներքոյ: Միացեալ Նահանգներ էին մեկնել միանգամից 32 մարզիկներ, որը ռեկորդային ցուցանիշ է եւ դեռ չի գերազանցվել: Ընդհանուր առմամբ՝ հայ մարզիկները վատ հանդէս չեկան՝ նուաճելով 1 ոսկէ եւ 1 արծաթէ մետալներ:

Յունահունական ոճի ըմբիշ Արմէն Նազարեանը 52կգ քաշային կարգում դարձաւ օլիմպիական ախոյեան, իսկ ազատ ոճային Արմէն Մկրտչեանը 48կգ քաշային կարգում արժանացաւ արծաթէ մետալի:

2000թ. Սիդնէյ, Աւստրալիա, 25 մարզիկ  
Այս խաղերում Հայաստանը ընդամենը 1 պրոնգով բաւարարուեց: Ծանրորդ Արսէն Մելիքեանը 77կգ քաշային կարգում գրաւեց 3-րդ հորիզոնականը: Պրոնգէ մետալի էր արժանացել նաեւ գերժանր քաշային Աշոտ Դանիէլեանը, սակայն յետագայում Աշոտից մետալը



Արմէն Նազարեան

հետ վերցրեցին, քանի որ նա դուպլինգ էր օգտագործել: Մեծ էին սպասելիքները ազատ ոճի ըմբիշ Արա Գէորգեանից, որ 1995, 1997 եւ 1998թ. դարձել էր աշխարհի ախոյեան: Սակայն օլիմպիական խաղերում Արային չյաջողուեց արժանանալ մետալի:

2004թ. Աթէնք, Յունաստան, 18 մարզիկ  
Այս խաղերում հայ մարզիչներին որեւէ մետալի չյաջողուեց արժանանալ: Յաջողութեանը մօտ էին ծանրորդ Գէորգ Ալեքսանեանը եւ հրաձիգ Նորայր Բախտամեանը, որոնք գրաւեցին 4-րդ հորիզոնականը: 2008թ. Փեքին, Չինաստան, 25 մարզիչ  
Օգոստոսի 8-ին մեկնարկելիք 29-րդ օլիմպիական խաղերում Հայաստանի պատիւը կը պաշտպանեն 25 մարզիչներ, որոնցից 23-ը նման իրաւունք են ստացել վարկանիշային մրցաշարերում:

### ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն սրտի խորը կակիծով իմացաւ վաճառանումը հոգեշնորհ Տ. Օշական վարդապետ Մինասեանի, որ տեղի ունեցած է 26 Յուլիս 2008ին, Ուոթըրթաունի իր բնակարանին մէջ:

Ողբացեալը իբրեւ հոգեւորական, երաժիշտ եւ խմբավար մեծ ներդրում ունի Պոսթոնի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ առընթեր նաեւ գաղութի երաժշտական կեանքէն ներս: Անոր խմբավարած համերգները Պոսթէնէն մինչեւ Լոս Անճելըս մեծապէս գնահատուած են մամուլի, հայ եւ օտար երաժշտասէրներու, եւ երաժիշտ մասնագէտներու կողմէ:

Խմբագրութիւնն իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ ծուխին, «Երեւան» երգչախումբին եւ իր բոլոր պարագաներուն:

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԵՍՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝  
**(818) 246-0125**

# Գրառուած Թուական Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

## Սեպտեմբեր 21, 2008

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
<b>21</b>	22			25	26	27
28	29	30				



Armenian Independence Day FESTIVAL

**To reserve your booth  
please call Nor Serount Cultural Association**

**Ձեր կրպակները ապահովելու համար**

**Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան**

**(818) 391-7938**